

ՅՈՒՆԻՍԿՈՒՄ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Օ Ր Ա Գ Ի Ր

Հ ՈՒ Շ Ա Տ Ե Տ Ր

Մի մարդու կյանքի հուշատետր, որի նախահայրերը մնացել են անհիշատակ հիշվում են միայն՝

1. Մխիթար - ապուպապիս պապի հայրը
2. Մելիք-Քալանթար - ապուպապիս պապը
3. Մովսես - ապուպապիս հայրը
4. Բյալլաղա - պապիս պապը
5. Ասլան - պապիս հայրը
6. Ալեքսան - պապս
7. Փիրաղա - հայրս
8. Բաբկեն - ես

Հիշվում են նաև մի քանի նախապապեր, որոնց հաջորդականությամբ չենք կարող շարադրել, բայց դրանցից կարելի է հիշատակել մեկին, որն իմ կարծիքով կարելի է համարել նախահայր։ Անունը եղել է Քալանթար, որի անվամբ էլ կոչվել են նրա հաջորդները կազմելով մի ազգ, որն այժմ ամբողջ գյուղում ամենամեծ ազգն է։ Եթե ընդունենք այդ որպես մի ժող, ապա ես կլինեմ մի կոհակ, որն անընդհատ իջնում բարձրանում է բնության, տարերքի ազդեցության ներքո, հաշտվելով իր միապաղաղ կյանքի հետ։ Դեռևս երևի ավելի երկար տևի այս ազգի պատմությունը և մենք էլ հիշվենք այնպես, ինչպես աղոտ կերպով հիշվում են մեր նախահայրերը այժմ։ Բայց ցավում եմ, որ մենք այնպիսի անուն և քաջություն ձեռք բերել երբեք չենք կարող, ինչպես նրանք են կարողացել ձեռք բերել, որը հիշվում է առապելի նման։ Երևի այդ բոլորը տեղավորեմ Օրագրիս մեջ, որպեսզի ավելի երկար հիշվի այդ անմոռանալի դեմքերը։

Էր փետրվարի 1941 թ.

ՔԱԼԱՆԹԱՐԱՅԱՆՆԵՐԻ ՆՄԱՊԱՊԵՐԸ

Քյառա Քալանթար

1. Սա հանդիսանում է այս ազգի հիմնադիրը, չնայած որ սրանից մեծեր էլ են եղել, բայց այնքան էլ չեն հիշվում։
Պետք է ասել, որ այն ժամանակ նրանք բնակվում էին Գանձակում, որտեղ Քալանթարը զբաղվում էր թեթև աշխատանքով, այն է , մուսկ, - ությամբ լճուր բաժանող այգիներին։ Գանձակում էր բնակվում նաև մովրովը, որի այգիների քուրը գիշեր ու ցեցեկ չէր կտրվում։
Ահա մի Օր ջուրը սաստիկ ցամաքում է և չի բավարարում գյուղացիներին, որոնք սկսում են տրտնջալ։ Քալանթարը իսկույն կտրում է մովրովի ջուրը և տալիս գյուղացիներին։ Մովրովը խիստ զայրանում է և հրամայում է բերել գլխատել։ Երբ բերում են, մովրովի այն հարցին թե ինչու է ջուրը կտրել և

տվել գյուղացիներին, նա պատասխանում է՝

- Մովրովն ապրած կենա դու միայնակ գոյություն ունենալ չես կարող եթե չլինեն նրանք /ժողովուրդը/, ուստի պետք է դու նրանց բարի աչքով նայես, որպեսզի նրանք ժամանակին քո թիկունքում կանգնած լինեն: Դուր է գալիս այդ խոսքերը մովրովին և հրամայում է տուժը մեղմացնել և ահա գլխատման փոխարեն կտրում են նրա մեկ ականջը: Ահա այստեղից էլ կոչվում է Բյառա Բալանթար /քյառա-կիսատ, պուատ/: Բալանթարը այլևս չի մնում այդտեղ: Նա գնում է այժմյան Շամշադին և բնակվում այնտեղ, որտեղ այժմ գտնվում են մեր այգիները:

Նա ունենում է երկու արու զավակ մեկը՝ Սարգիս, որը ինչպես եկել այնպես էլ գնացել է, մյուսը՝ Բյալլաղա, որը համարվում է ազգի փառքն ու պարծանքը: Բալանթարը մեռնում է իր մահով:

Բյալլաղա

Կարելի է ասել, որ այս բոլորի մեջ ամենից քաջը և ամենից աչքի զարնվողը հանդիսանում է Բյալլաղան, որն իր կյանքը փառավորել է քաջություններով ու արկածներով: Դրանցից հիշատակենք մի քանիսը:

1.

Այդ այն ժամանակ էր, երբ այսպես կոչված լեզգիները գալիս էին խմբերով թալանում գյուղերը և առևանգումներ կատարում /թե տղամարդկանց և թե կանանց/ նրանք այդ շնչավոր առարկաներին տանում և վաճառում էին հարուստներին որպես ստրուկներ: Այսպիսի իրադրություն նկատվում է նաև ,,Արսեն Մարաբդեղու,, մեջ: Բյալլաղան իր համարձակության շնորհիվ ինքնըստինքյան դառնում է մի խումբ մարդկանց ղեկավար և գլխավորում է լեզգիներին արտաքսեղու խնդիրը: Այս դեպքը պատահում է գյուղի եկեղեցում, որը գտնվում է գյուղից 2-ից ավելի կիլոմետր հեռավորության վրա, սաղարթախիտ անտառի մեջ: Իսկ այժմ գոնե չի նկատվում այդ մատուռի ավերակները, որպեսզի ապացուցեր, որ երբևիցե այդտեղ են ժամանել մերկ ու տկլոր մայրեր շալակած իրենց մահամերձ մանկանցը, որոնք աստճո ողորմության կարիք էին զգում: Իսկ անտառի փոխարեն կտեսնեք այստեղ կամայայտեղ խմբված մացառներ և փշեր, որոնց տակ վխտում են Օձեր և մողեսներ: Հենց այստեղ էին խմբված Թ Բյալլաղի փոքրաթիվ մարդիկ:

Խավար գիշեր էր: Խումբը անկանոն կերպով փռված էր խաչամի վրա և կրակի մարող կայծերին նայելով խորհում էին գերության մեջ գտնվող սիրելիների մասին: Բոլորի դեմքին կարդացվում էր սարսափ: Բյալլաղան չի նստում կրակի շուրջը, այլ որպես փորձված ուզմիկ շրջագայում է անտառը, որպեսզի խումբը անակնկալի չհանդիպի:

Բոլորը քնած էին մեռելային քնով:

Բյալլաղեն ուսժիրն գցելով յափնջին գնում է նորից շրջագայության: Նա մոտենում է ամայի եկեղեցու՝ |ամայի, որովհետև բոլոր հոգևորականները լեզուները վախի ազդեցության տակ գնացել էին գյուղ, թողնելով եկեղեցու պատերը միայն|: Նա ծառերի արանքից նկատում է ինչ որ խարույկ, որի շուրջը խմբված էին թվով յոթ մարդ: Դրանք լեզուները էին, որոնք իրենց շորերն էին չորացնում կրակի վրա: Բյալլաղեն սպասում է մինչև նրանք քնում են, իսկ ինքը հուշիկ ֆայլերով կիսահան մոտենում է խարույկին և ձևացնում իբրև թե շորերն է չորացնում: Դա անում է նրա համար, որպեսզի քնածները արթնանալու դեպքում կարծեն թե արթունը իրենց ընկերներից է: Նա այդ դիրքում կարողանում է հավաքել բոլորի հրացանները և հեռացնում, այնուհետև հագնվելով ու լցնելով Յ հրացանները ուզում է գործը վերջացնել: Բայց պատիվ չէր բերի քաջին թշնամուն քնած ժամանակ կոտորել: Եվ ահա հենվելով ծառին և հրացանները շարելով առջևը՝ բացականչում է

„ Եյազգի դուր, „

և միաժամանակ պարպում է ձեռքի հրացանը անշնչացնելով մեկին:

Լեզուները սարսափած արթնանում են ու սկսում են իրար հարվածել, իսկ Բյալլաղեն հերթով վերցնում է մյուս հրացանները և կրակում: Այսպիսով նա ղնչացնում է խուճապի մատնված 6 լեզուների, իսկ նրանցից մեկը կարողանում է ծկել եկեղեցու ստորջրյա անցքով, որպեսզի այդ աղետալի լուրը տեղ հասցնի

2

Հայտնի չէ նորից լեզուներն են լինում թե պարսիկները |հավանականը վերջինն է| բայց խնդիրը դրանում չէ, ահազին մարդկանցով շրջապատում են գյուղը | որն ադրբեջաններն կոչվում է Բյալանթալ | և սպառնում են հասարակությանը, սակայն շատ աղետներ տեսած գյուղացիութունը դրան դիմավորում է շատ սառնասիրտ, որովհետև շատ այդպիսիներ են եկել ու գնացել առնելով համը Բյալլաղի գնդակների:

Սակայն թշնամու ղեկավարը ցանկանում է գրավել գյուղը առանց ընդհարման և նա իր երկու հավատարիմ զինվորներին տալիս է մի գրութուն, որով դիմում է Բյալլաղին անձնատուր լինել: Այդ զինվորներին ճանապարհին անտառի մեջ կանգնեցնում է Բյալլաղան: Զինվորները պատմում են իրենց գալու պատճառը և խնդրում, որպեսզի իրենց ցույց տա Բյալլաղի տեղը: Բյալլաղեն թագնում է իր ով լինելը և սիրալիր դիմում է զինվորներին՝

„ Եկեք մի քիչ հաց ուտե՛ք, խոսե՛ք նոր կգնանք, „

Համաձայնվում են: Երբ ընթրիքը վերջանալու վրա է լինում Բյալլաղեն ասում է՝

„ հապա եկեք այս ծառին նշան բռնե՛ք տեսնե՛ք ով կվիպի, „ և առանց պա-

տասխանի սպասելու մոտենում է ժառին և թրով նշան անում: Առաջինը կրակում են զինվորները և ոչ մեկը որևէ արդյունքի չի հասնում: Վերջում կրակում է Բյալլադեն առաջին գնդակը անցնում է ուղիղ նշանի մեջ տեղից, երկրորդը և երրորդը հետևում են նրան: Մինչ զինվորները ապշած չեն կարողանում իրենց զարմանքն արտահայտել, Բյալլադեն հանում է ծառից իր արձակած երեք գնդակները, որոնք խրվել էին մեկը մյուսի մեջ: Շա հանձնում է այդ ձուլվածքը զինվորներին և ասում՝

„Գնացե՛ք ձեր մեծին ասացե՛ք, որ Բյալլադեն ասում է եթե համարձակվեցի՛ր ոտք դնել այս կողմի վրա, ապա այսպիսի 3 գնդակ կշամփռես կրճճումդ,“:

Մյուս Օրը գյուղն ազատ էր:

„ „

„

1940 թ. Սեպտեմբեր

17-ին Գնացի Աղասենց այգին պոպոկ թափ տալու: Շոգերն անցնում են: Երեկոյան Աղասու հետ դիտեցինք կինո , Մոսկվայում, , Զ. Զապլինի , Մեծ քաղաքի կրակները, , կինո-կոմեդիան:

18-ին Շույն խնդրով նորից գնացի այգի: Այդ Թրը Աղասին ծառից վայր ընկավ, որոշ ցավ պատճառելով նաև ինձ: Մարմինս ջարդվածի նման է:

19-ին Գիշերն անձրև էր եկել: Անձրև եկավ նաև ցերեկը: Երկինքը մառախլապատ է: Մեջքս բավականին ցավում է:

20-ին Տաղտկալի Օր է:

22-ին Առավոտյան շատ վաղ Հրաչիկը վեր կացրեց և ճանապարհ ընկանք դեպի Թեժ-րաբազ: Կոլխոզ շուկայում խաղող կերանք և հանդիպելով Աղունիկի ավտոյին նստեցինք մինչև Կիրովյան փողոցը: Մնացած ճանապարհն անցանք ոտքով: Ջրվեժի մոտ պատահեցինք գառնարած Սուրենին և նրա միջոցով կանչեցինք Գուրգենին: Հասանք Թեժրաբազ /երկուսով/ մեր անելիքն արինք: Ծանոթացա այնտեղ Գեղամ անունով մեկի հետ, որն աշխատում էր Երևանի կարի գործարանում: Վերադառնալիս ճանապարհս թեքեցի Ջրվեժ և գիշերեցի այնտեղ Մարտիրոսենց տանը:

23-ին Առավոտյան զարթնեցի: Մարտիրոսը գնացել էր աշխատանքի: Լվացվեցի և գնացի Գուրգենի մոտ, որը հոր փոխարեն կոլխոզի գոմի ճահակն էր: Գուրգենենց տանը լավաշ ուտելուց հետո եկանք քաղաք: Գալով տուն ասացին, որ Աղասին քեզ կանչել է, բայց ես ալարեցի գնալ հոգնած էի: Այսօր Ալիսան և Զհանը եկան մեզ մոտ: Կարմիրից եկել էր Բաղիշը մի ընկերոջ հետ: Գուր-

գենը գիշերեց մեր տանը:

24-ին Առավոտյան երբ գնացել էի հեռագրատուն Աղասին եկել էր ինձ մոտ: Ժամը

4-ին նորից գնացի հեռագրատուն, որտեղ ռուսներեն թեւադրութիւն գրեցինք:

Անցավ անհաջող: Վաղը ժամը 12-ին պետք է նորից գամ հեռագրատուն:

25-ին Տաղտկալի Զր է:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1-ին Օրը պայծառ է: Երեկոյան ժամը 8-ին հեռագրատանը ունեցանք առաջին դասը, որտեղ գրեցինք մորզեյի այբուբենը և տան համար տրվեց սովորելու 9 տառ:

Դասատուն մի երկարահասակ, նիհար դեմքով ռուս մարդ էր ծխում էր չիբուխ:

Անվանում էինք Գարրի Արտուրովիչ:

2-ին Բավական ժամանակ Աղասուն չէի հանդիպում, վերջապես այսօր առավոտյան եկավ մեր տուն: Միասին սովորեցինք տված դասը և սկսեցինք խոսակցել մորզեյի այբուբենով լույսի և թառի միջոցով: Երեկոյան միասին գնացինք հեռագրատուն: Դասավանդեց մի պապաշա լանունը չեմ հիշում | , , կոպֆեր, , ընդունիչի և հաղորդիչի մասին: Մեծ բնականութեամբ լսեցինք: Դասից հետո Աղասին գնաց շախմատի սկումբ, խոստանալով վաղը նորից գալ:

3-ին Երեկոյան Աղասին չեկավ: Գարրի Արտուրովիչը դաս հարցրեց: Ամենալավը ես էի սովորել: Այսօր լուր տարածվեց այն մասին, որ ուսումը փոշոյով է բացի 1-ից 7-րդ դասարանները: Ուսանողները անհանգիստ են:

4-ին Վերոհիշյալ լուրը ճիշտ էր: Տպագրվել էր , , կոմունիստ, , թերթում: Նշված էր այն մասին, որ 8-ից 10-րդ դասարանների աշակերտները տարեկան մուծեցու են 200 ռ.: Տեխնիկումում սովորողները նույնը: Համալսարանում մուծում են 400 ռ.: Գերազանցիկները չեն մուծում: Դասս սովորել եմ:

5-ին Բնից վեր կացա ժամը 10-ին: Դեռ անկողնումս էի, երբ ցրիչը հանձնեց մեկ հեռագրաթուղթ վրան նշված էր 24 ռ. 40 կոպ. Գնացի փոստ, բանից պարզվեց, որ եղբորս վրա ուղարկած 30 ռ., որից 5 ռ. այնտեղ , , փափաղ, , էին արել և նոր ուղարկել | տեղ չէր հասել դրամը |:

Խանութը պեսոկ եկավ: Երկու անգամ գնեցի | 2 կիլո |: Ժամը 5-ին Հրաչիկը ժանոթացրեց իր մորաքրոջ տղա Գեղամի հետ, որը լավ զուգնա նվագող էր: Ժամը 7-ն անց կեսին գնացի փոստ՝ դպրոց | այսուհետև այսպես կանվանենք |: Դասերը անցավ հաջող: Գրեցինք թեւադրութիւն ամենամաքուր գրածը իմս էր, Տանյայինը և մեկ ռուս աղջկա: Մեր երեքիս գրածները հետ տվեց, իսկ մյուսներինը տարավ ստուգելու: Ժամը 10-ին 15 ըրպպե պակաս վերջացրինք: Եկա տուն և մինչև ժամը 12-ը վերջացրի , , Ունեվորութիւն ճանապարհին, , անդուրալի պիեսան:

6-ին կիրակի է | հանգիստ |: Զարթնեցի ուշ: Առավոտյան Հրաչիկը և Գեղամը եկան ինձ մոտ սկսեցինք նվագել: Բիչ հետո Գրիշան էլ եկավ: Ահագին բազմութիւն

- էր հավաքվել բազմաթիւ շուրջը: Արմենակն ու ես գնացինք կառուցուի 3-րդ մասը Նազարին տեսնելու: Նոր հրամանագիր է լույս տեսել, այն է, որ սրանից հետո բանակ գնացողները, գնում և վերադառնում են իրենց շորերով: Երեկոյան գնացի չորաչի քրոջ տուն, մի քիչ կերանք ու նվագեցինք Վինչէլ ժամը 10-ը/ : Ընթերցում եմ Մ.Սանվելյանի , Անպատը կճաղկի , գիրքը:
- 7-ին ժամը մեկին Արամի և Կոստանի հետ գնացի կոնսերվի գործարան: Ստացանք պրոպուսկ, որպեսզի աշխատենք բանջարեղենի ցեխում: Ենթարկվեցինք բժշկական քննութեան Սուաշին անգամ և այլն / :
- 8-ին Առավոտյան ստացա խալաթ /նո. 75/ և անցա աշխատանքի՝ /1-ին սմեն էի/ գազար էի տեղափոխում: Ահագին չարչարվեցի: Տեղափոխեցի 3400 կգ. գազար: Երեկոյան գնացի հեռագրատուն: Դասին քիչ էր մնում քնեի: Երեկոյան գիրք չկարդացի:
- 9-ին Գնացի աշխատանքի: Մի քանի յաշչիկ տեղափոխեցի: Հանկարծ գետնին ընկած տախտակի վրայի մեխը կոշիկս ճակեց և մտավ ոտս: Իսկույն կաղալով գնացի բժշկի մոտ: Ընդմիջմանը գնացի ճաշարան: Մեկ ուռբէի տվի և վերցրի մեկ 2-րդ /հիմար լոբէ էր/: Երեկոյան Գրիշայի հետ գնացինք հեռագրատուն: Պարպեցինք կէլուշի /մանիպուլյատոր/ վրա: Բունս չէր տանում: Բայց եւ ղփարանում եմ /կաղում եմ/: Գիշերը վերջացրի , Անպատը կճաղկի , սիրելի գիրքը:
- 10-ին Գնում էի աշխատանքի: Դեռ կոլխոզ շուկային չէի հասել, երբ 7-ի գուդուկը խփեց: Լավ է որ պրոգուլ չկա ինձ: Գնացի այնտեղի բժշկուհու մոտ նա ասաց որ գնա ամբուլատորիա: Գնացի 3-րդ պոլիկլինիկա: Այնտեղ ոտքս կապեցին, բայց ազատման թուղթ չտվին: Գիշերը և հենց այսօրէ անընդհատ անձրև է գալիս:
- 11-ին Գնացի աշխատանքի, որպեսզի մի տեղ գործ փնտռեմ: Առավոտյան դեռ չէի վեր կացել երբ Սոսիսն եկավ մեզ մոտ: Մի քիչ թառ նվագեցինք ու գնացինք Գյուղացու տուն: Մի անգամ շախմատ խաղացինք ես տարվեցի: Այդտեղից գնացինք պետապի բաժանմունքը /քաղտրանսի շենքում/: Աշխատակիցներից երկու հոգի Մեկիքի ընկերուհիներն էին: Իմացա որ այդտեղ գործակցի տեղ կա: Ասացին որ վաղն անցնեմ: Այսօր Գրիշայից վերցրի , Բեն-ձուր , գիրքը: Գրիշայի հետ միասին գնացինք հեռագրատուն: Մինչև ժամը 12-ը ընթերցեցի: Դուր է գալիս:
- 12-ին Այսօր Նազարը եկավ մեր տուն, բայց առանց որևէ մեկին /մամային կամ հայրիկին/ տեսնելու վերադարձավ: Բիչ հետո եկավ նաև Ասլանը: Գնացի Պետապ դիմում գրեցի: Ասացին որ պատասխանը կստանաս ամսի 14-ին: Մինչև ժամը 2 և քիչսը ընթերցեցի:
- 13-ին կիրակի է: Առավոտյան վեր կացա տեսա, որ ինձ համար գնել են կոստյում, բայց ամսաս շալվարը փոքր է: Ասլանը գիշերել էր մեր տանը: Մուշեղը և

Արշակը եկան մեր տուն և Ասլանին տարան: Արմենակն թե ևս գնացինք Արշակենց տուն / Բաղմանյան / այնտեղ ճաշեցինք և նորից Ասլանին բերեցինք մեր տուն: Արփիկը երեկոյան եկավ մեզ մոտ: Կոստյուկոս շատ հավանեց: Այսօր կվերջացնեմ ,,Բեն-Հուրը,, : Լավ գիրք է:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

25-ին Ահագին ժամանակ է, որ թողեւ եմ Օրագրով զբաղվելս դա իհարկե իմ թուլության հետևանքն է: Բնավորությանս խոցելի կողմն այն է, որ կտեսնես մի գործի եմ կկաշեմ շատ տաքացած և Օրեր, գիշերներ անգամ կմտածեմ, կխորհեմ դրա մասին, իսկ մի քանի Օրից հետո, բոլորովին կձանձրանամ, բայց դա էլ կարճատև կլինի: Բնավորությանս այս գիծը նման է ծովի մակնթացությանը և տեղատվությանը: Օրինակի համար մոտ տասը Օր անընդհատ գնում էի քաղ. գրադարան և ընթերցում այնտեղ, թվում էր ինձ, որ առանց դրան չեմ կարող Օրերը մթնեցնել, բայց ավաղ, այդ միայն թվում էր, բավական է մեկ Օր չգնացի և այնուհետև շենքից անգամ խուսափում էի: Բայց պետք է ասել, որ ընթերցանությունից չեմ կտրվում: Սմեն գիշեր, եթե մինչև հոգնելս չկարդամ, չեմ կարող քնել: Գու՞ցե սա նույնպես մտքիս /կամ հոգուս/ մակնթացությունն է, բայց դա առայժմ հարց է:

23-ին հեռագրատանն անցկացավ քննությունը: Սմենառաջինը յես քննվեցի և ստացա ,,Գերազանց,, գնահատական:

Գրիշան ստացավ ,,Լավ,, ,,Լավ,, փոխադրվեց

Լիպարիտը նույնպես	,,Լավ,,	,,Լավ,,	Քոխադրվեց
Լուգավայան	,,-,,	,,գեր,,	- ,, -
Հակոբյան Լ.	- ,, -	,,Լավ,,	,,Լավ,,
Պերշինա Կ.	- ,, -	,,Լավ,,	,,Լավ,,
Եգեշկո Իվ.	- ,, -	,,գեր,,	,,գեր,,
Ներսեսյան Ն.	- ,, -	,,Լավ,,	,,միջ,,
Զնախուրենկո Տ.	- ,, -	,,Լավ,,	,,վատ,,
Պիսանցևա Ա.	- ,, -	,,միջ,,	,,վատ,,
Պլոտնիկով Տ.	չէր եկել	քննության	ոչ

Այժմ մինչև ամսույս վերջը պրակտիկայում ենք /ավարտածներս/: Խոսք կա, որ բաց պետք է անեն կլոպֆերիտներին խումբ, որի մեջ իմ և Լիպարիտի անունն էլ կա: Եթե հաջողվի սովորել, ապա շատ լավ կլինի: Երեկ ստացանք Մելիքի նկարը: Այսօր ստացանք նրա ուղարկած պասիլկան 3 զույգ կոշիկ /եթե կարելի է այդպես անվանել/ 4 հատ բլոկնոտ և մատիտներ:

29-ին /առավոտյան ժամը 5-ից/ քնած էի երբ հանկարծ ժամը 3-ին արթնացա դուրս ու թեղ ու թեղ զարկից և տեսա, որ հայրս կիսահագնվել աճապարում է դեպի դուռը: Այդ ժամանակ հարևան սենյակից լսվում էր նորմալ տոնով

խոսակցութիւնն: Որոշ ժամանակից հետո նորից մեր դուռը ծեփեցին և հայրս համարյա գուշնը նետած գնաց: Կանչել էին չգիտեմ ինչու և իրավունք էլ չունի հայրս ասելու այդ: Բունս այլևս չտարավ: Միայն ժամը հինգին մայրս ասաց, որ Գրիշնիին բռնել են: Դե բռնել են բռնել են, երևի մի բան կա, որ կալանքի տակ են առել, կամ թերևս միայն հարցաքննում են: Հարց է: 5 և կեսին վեր կացա և հագնվեցի /չգիտեմ ինչու քունս չէր տանում/: Լվացվելուց հետո նստեցի և Օրագիրս սկսեցի գրել: Բայց թողնենք սրանք, որովհետև համարյա կապ չունի հիշատակվելու տետրիս մեջ: Խոսենք իմ և իմ գործերի մասին:

Պրակտիկան անցնում է հաջող: Այս էլե երկու Օր է ինչ կլոպֆերի դաս ենք անցնում դասավանդում է ինչ որ հեռագրատան աշխատակից Հակոբ Հակոբյանը, որի առաջ ես ունեցեցիցս ավելի վեր եմ դասվում:

1941

ՀՈՒՆՎՍՐ

25-ին Արդեն 25 Օր է, որ անցել եմ աշխատանքի և ստանում եմ 180 ռ. /շատ ողորմելի է չէ՞/: Ընկել եմ ամենի՝ երկու Օր աշխատում եմ առավոտյան ժամը 9-ից մինչև 16-ը, երկու Օր ժամը 16-ը 24-ը և նույնքան Օր ժամը 24-ից 9-ը: Ինչ հետ աշխատում է նաև Լիպարիտը, իսկ Գրիշան ամեն Օր աշխատում է ժամը 16-ից 24-ը: Այս ասագին ժամանակ է, որ անհամբեր սպասում էինք պապին: Եվ ասա այս Օր, երբ գիշերվա աշխատանքից հոգնած եկել էի քնել հազիվ 3-4 ժամ քնած լինեի, երբ մեկը սառը ձեռքերով շփեց ճակատս: Աչքերս բացեցի և ինչ տեսնեմ հորաքույրս՝ Սաթենիկ աքիրն է, իսկ վառարանի մոտ դողդողալով նստած էր մեր գերդաստանի , , քոթուկը, : Արագ հագնվելով առանց ողջունի գնացի Լվացվելու /առհասարակ անհարմար է լինում որոշ ժամանակ, իրար հայացքով ամեն ինչ չափում և հասկացնում իր զգացմունքները լուրթյամբ և հանկարծ բարևում են իրար կարծես նոր տեսած լինեն/: Եվ այդպես էլ ինչ պատահեց: Երբ ներս մտա նա հուզված ձայնով կանչեց:

- Արի բալա ջան տեսնեմ ոնց ես, ես մոտեցա և համբուրվեցինք այնպես, ինչպես համբուրվում են երկար ժամանակ իրար չտեսած հարազատները: Դրանից հետո լսվեց նրա մեղմ հեկեկոցը:

լուց հետո, ես բաժանվեցի նրանից խոստանալով նամակ գրել:

Շտապում էի Արփիկենց տուն, որովհետև խոստացել էին հյուրասիրել նոր որսած պխրայի մսով: Ճաշը շատ համեղ էր: Մի քիչ խմելուց ու ուտելուց հետո հրաժեշտ տվի նրանց և աճապարեցի տուն: Մայրս թխել էր մի քանի կարկանդակ, մի կտոր պանիր էլ վերցնելով լանկախ իմ ցանկության հորիցս վերցրի 30 ռուբլի/ և ուղևորվեցի դեպի կայարան, թողնելով տանը լացակումած հարազատներին: Կայարանում մոտ կես ժամ սպասելուց հետո եկավ ստարշինան: Մի քանի պտահական ընկերներով, որոնք ևս գնալու էին Հոկտեմբերյան նստեցինք առանց տոմսի գնացք: ~~Մի քանի պտահական-ընկերներով~~ Արզումանյանը այդ օրը չէր եկել, որովհետև վաշտի հրամանատարի տեղակալ լեյտենանտ Մուխոբտովը նրան կարգադրել էր սպասել միասին մեկնելու համար: Մինչև գնացքի շարժվելը քունս տարավ: Զարթնեցի այն ժամանակ, երբ արդեն Ուլուխանլուն անցել էինք: Մեկ քնգամ ծխելուց հետո պտորաստվեցի իջնելու, բայց դեռ կայարանը շատ հեռու էր: Գնացքը լեկ-լեցուն էր ճամփորդներով: Զովանալու ցանկությունը զգալով որոշեցի դուրս գալ տամբուրի վրա: Միջանցքում մի քանի աղջկերք իրար գլխի թափված ուրախ զրուցում էին: Ես դրանց ոտնահարելով ու միևնույն ժամանակ սրախոսելով անցա այդ մսեղեն պատնեշի վրայով: Կարճես նրանք հենց դրան էին սպասում, որպեսզի դիսպուտի մեջ մտնեն ինձ հետ: Ես վարպետորեն պաշտպանվելու հետ միասին օպորտուն էի խիստ սատիրիկ խոսքեր: Նրանք ինձ ասացին, որ քո շարժ ու ձևը նման է դերասանի:

Զարմանում եմ, սա էլ երկրորդ դեպքն է, որ աղջիկներն ինձ անվանում են դերասան: Բայց միևնույն ժամանակ նկատեցին, որ ես վարվելու, այսինքն խոսք բաց անելու ձևը չգիտեմ, միշտ անկախ ինձանից կոպտում եմ: Արդարանալու համար ես ասացի, որ այժմ կռիվ է ժամանակը չի ներում շաղակրատությամբ զբաղվելու: Վերջապես գործս այնքան բարդացավ, որ քիչ էին մնում լաց լինեն: Լավ էր հասանք Հոկտեմբերյան: Ստարշինան մեզ առաջնորդում էր դեպի 3-րդ սովխոզ: Ճանապարհին հյուրասիրելով ընկերներին կարկանդակով շարունակեցինք ճանապարհը, որն անցնում էր ծառուղիների միջև: Գիշերվա ժամը 2-ն էր: Յուրտ էր: Մինչև ուղևորվելս հայրս ասել էր, որ Ալեքանց Գրիգորը աշխատում է Հոկտեմբերյանի ինչ-որ սովխոզում: Եվ առաջարկեց նեղն ընկած դեպքում դիմեմ նրան: Թ Դեռ ճանապարհի կեսը չանցած հետևներիցս լսեցինք չոր հազի ձայն: Կանգ առանք: Անժանոթը մոտենալով անհամարձակ կանգ առավ և բարևեց: Որպեսզի նրան այդ անտանելի դրուժյունից հանեմ, առաջ շարժվեցի և սկսեցի , ,կիսատ թողած, , զրույցը շարունակել: Հենց առաջին հարց ու փորձից պարզվեց, որ դա հենց ինքը մեր Գրիգորն է: Նա ինձ չէր ճանաչում: Ես ձեռքս մեկնեցի և հայտնեցի իմ ով լինելս: Ընդունելությունը սառն էր: Նա ասաց, որ վաղը չէ մյուս օրը գնում է այստեղից: Հասնելով սովխոզ նա մաղթեց բարի գիշեր ու բաժանվեց: Հասանք ճամբար: Սկզբում լավ տպավորություն գործեցին

ֆինանսական տնակները ուղիղ շարքերը:

2-ին Գիշերեցիներ անառնի ղեկավարում: Առավոտյան ուշ աղթնացա: Գնացինք տեսնելու մեր զեմլյանկան: Ուղին չհարմար բայց ցուրտ տեղ է: Վերջացնելով այսպես կռված գեներալնայա ուբորկան սկսեցի զբաղվել ֆորմա նո. 4-ի վերջացմամբ: Եվ ահա ընթրիքից հետո նստած գրեցի այս տողերը ձեռքի ճրագի տակ: Ցուրտ է: Սպասում եմ երեկոյան ստուգմանը: Ստարշինան քնած է: Ստուգում չեղավ:

3-ին Գիշերը ահագին անձրև էր եկել: Նույնը կրկնվեց նաև ցերեկը: Այս վայրը Ավլալայից տարբերվում է միայն նրանով, որ շատ ցեխ էի լինում: Ցերեկը եկան ավագ սերժանտ Արզումանյանը և Գթվարյանը /Շամշադինեցի/: Լեյտենանտը գալու է գիշերը իր և վաշտի հրամանատարի կնոջ հետ: Մահճակալը լայնացրի: Շտաբից կարգադրեցին ֆորմա նո. 4-ից հատուկ բաժնի համար էլ գրել: Սա էլ մի նոր խաթա: Սպասում եմ ընթրիքին: Ստարշինան քնած է: Երևի նորից ստուգում չլինի:

13-ին Օրերն անցնում են համարյա ձանձրալի: Երեկ Ղափանից եկան Հարությունյան Ջավադը /Իջևան, Սևաբար/, ավագ սերժանտ Թորոսյան կարենը /Ղափան/, Մատինյան Անդրանիկը /Կիրովականի Դևբեդ գյուղացի/ և էլի մի քանի մարտիկներ: Լեյտենանտ Բաղդասարյանի հետ միասին: Այս առավոտ ստարշինան այնքան խնդրեց, որ տեղիցս ելնեմ գնամ վաշտը կերակրելու, չվերկացա: Քուենս սարսափելի տանում էր: Եվ զղջում էի իմ արարքը և նորից պառկում քնելու: Ինձ թվում էր, որ ստարշինան գոնե մի քանի Օրով կխալի իր հարաբերություններն ինձ հետ, բայց ի զարմանս, ահա քնելու ժամանակն է, բայց դեռ մի ,,թթու,, խոսք էի ասել, կարծես թե ոչ մի անախորժություն չի պատահել: Այժմ կասկածում եմ, գուցե տեղն եկած ժամանակ երեսովս տա: Այսօր կիրակի է: Տեղի ունեցավ պարտ ժողով: Քննվեց Արզումանյանի հարցը: Նախորդ պայմանավորված հարցերին փայլուն կերպով պատասխանեց և ճակատը բաց ընդունվեց: Ի հարկե ժողովականները հասկացան մեր ,,խարդախությունը,, : Երեկոյան սովխոզի ալումբում, մի կապիտան զեկուցեց միջազգային իրադրությունների շուրջը: Զեկուցումից հետո ցուցադրվեց ,,Օդին դեն վոյնի,, ֆիլմը:

Ուղիղ մեկ տարի անառնի:

Երեկոյան էի վազիտում: Հագցրին ,,ֆրոնտովոյ,, շորեր /ձմեռային/: Հիշում եմ իմ մտերիմ ընկերներ Դավթյան Վահագին, Մովսիսյան Վարազատին, Նալբանդյան Խորենին, Մովսիսյան Նապոլեոնին և ուրիշ շատ-շատերին: Այդ Օրերին սովորություն էր դարձել, որպեսզի ամեն ժր մեկ արկղ մանդարին գնեինք: Կեսն ուտում էինք, իսկ մնացածով նորից հետ ստանում մեր դրամը: Կարճ ասած վաճառում էինք: Լավ Օրեր էին:

14-ին Առավոտյան համարյա նույն իրադրութիւնն էր: Զարմանալի բան է, երեկոյան շատ ուշ պառկում եմ, սակայն քունս չի տանում, իսկ առավոտյան սարսափելի դժվարութեամբ եմ վեր կենում: Տեսնենք սրա վախճանն ինչ բնույթ կկրի: Մինչև ճաշը շատ զբաղված էի: Ճաշին ահագին կտակներ ու խաղ արեցինք: Մինչև անգամ թերթ կարդացի | Մեզ մոտ ճաշը շատ երկար է տևում մոտ 2-3 ժամ այնպես, որ կարելի է այժմ ժամանակամիջոցում մի հետաքրքիր գիրք կարդալ: Երեկոյան նոր պարտ թեկնածուների խորհրդակցութիւնն եղավ:

Ուղիղ մեկ տարի առաջ:

Այս նույն Օրը վազիանում ճաշի էինք նստած, երբ մի կիրովականցի տղա հայտնեց ինձ, որ մայրդ եկել, քեզ է սպասում: Թողեցի ամեն ինչ, թառս վերցրի ու վազեցի մորս հանդիպելու: Հագուստս այնքան անճանաչելի էր դարձրել ինձ, որ մայրս շատ մոտիկից միայն կարողացավ ճանաչել: Մորս հետ եկել էր նաև փոքր եղբայրս՝ Արտուշը: Հապճեպորեն մի քանի խոսք փոխանակելուց հետո նրանք հրաժեշտ տվին և վերադարձան: Գու՞ցե ինձ թվաց, թե այդպես շատ շուտ վերադարձան: Համենայնդեպս փաստն ասում է այն, որ ինձ թվաց թե դա երազ էր:

Մորս բերած քաղցրավենիքները վայելում էինք մի քանի լավ տղաների հետ միասին: Բայց միևնույն ժամանակ որոշ մասը պահեցինք նախազգալով սպասվելիք դժվարութիւնները:

Ուրախ տրամադրութեան մեջ էի: Իմ, Վահագի և Վարազդատի ընկերութիւնը շատ սերտ էր: Վահագը մեր ,,մատակարարման բաժնի վարիչն էր,,: Այսինքն վարսավիրութիւնն անելով մեր վատնած դրամը հետ էր դարձնում:

15-ին. Ահա մի քանի Օր է, որ միշտ ցերեկը արև է լինում, այնպես, որ կարելի է առանց շինելի շրջել | այսինքն դեռ մինչև այժմ շինել չեմ հագել, որովհետև խանգարում է աշխատել |: Օրագիրս անսահման ընդարձակ եմ գրում նրա համար, որպեսզի եթե հաջողվի մի քանի տարուց հետո կարգալ, ապա կարողանամ վերհիշել այն Օրվա ամեն մի անց ու դարձն և մինչև անգամ, թե ինչ տրամադրութիւնն եմ ունեցել:

Վաղը Զ.Ա.Կ.Վ.Օ-ից մարդիկ են գալու ստուգելու մեր ռազմա-քաղաքական պատրաստակամութիւնը: Որոշել եմ վաղը գնդացրից կրակել |2-րդ վարժութիւն|:

Ուղիղ մեկ տարի առաջ:

Այս նույն Օրը ուղիղ ժամը 12-ին նստեցինք մարդատար գնացք և ուղևորվեցինք ճակատ: Մինչև Թբիլիսի հասնելը մի քանի հակիրճ, բայց բովանդակալից |ազդեցիկ| նամակներ գրեցի հարազատներին: Տղաներից շատերն էին տխուր: Պետք է ասել, որ ես շատ անտարբեր էի:

16-ին. Հրաձգութիւնս այսօր շատ անհաջող անցավ, բայց և այնպես չտխրեցի, որովհետև զգում էի, որ այնուամենայնիվ ես լավ կրակող եմ:

կրակային գոհում մեղմ ընդհարում ունեցե՞ս ստ. Լեյտենանտ Դավթյանի և Լեյտենանտ Բաղդասարյանի հետ: Մինչև ճաշը նույնը կրկնվեց, բայց ավելի սաստիկ: Տրամադրությունն ընկած էր: Երեկոյան պարտ ժողովում այնպես խարազանեցին մե, մեր թերութունները, որ երկուսն էլ սկսեցին մեղադրել նրա համար, իբր , ,դիմազրկում եմ բոլորին, , : Զգում եմ, որ իմ և Դավթյանի , ,կոնտակտ հարաբերությունն, , |ինչպես ինքն է ասում|, աստիճանաբար կխզվի և հենց դրա մեջ էլ գտնում եմ իմ անկումը: Պետք է ասել, որ իմ կյանքս միշտ անց եմ կացրել հետևյալ ստադյաներով: Նոր շրջապատում այնքան համեստ ու գործունյա եմ դառնում, որ իսկույն աչքի եմ ընկնում ու սկսվում է իմ վերելքը: Բայց մինչև զագաթնակետին հասնելը հանկարծ մի կոպիտ սխալի կամ անհոգության շնորհիվ ավելի արագ անկում եմ ապրում, քան բարձրացել էի: Վաղը բանակի քաղ. բաժնից եկած կոմիսիան պետք է ստուգում անց կացնի: Երեկոյան մեր ընդհարման շուրջը խոսեցի Լեյտենանտ Բաղդասարյանի հետ |եկել էր վաղը կրակողների ցուցակը կազմելու| և պարզեցի այն, որ նա իմ արտահայտությունը այլ կերպ է հասկանում, քան իմ մտադրությունն էր: Ինչն անց կեսին հրավիրվեց սովորաբար ակումբում գումարտակային պարտ. ժողով: Ելույթ ունեցավ մայոր Գալուստովը |բրիգադայի քաղ. բաժնի պետ| խոսելով մեր խոցելի տեղերի մասին: Ժողովից հետո դիտեցինք , ,Այ-գյուլ, , ֆթլմը: Ահա ժամը 2-ին մոտ է, եկել և շարունակում եմ Օրագրիս գրանցումը: Ստարշինան 7-ն անգամ քնել ու վեր է կացել:

Ուղիղ մեկ տարի առաջ:

Ձերեկը բոլորս ուշադրությամբ նայում էինք գնացքի ընթացքի ուղղությանը և ենթադրություններ անում, արդյոք գնացքը հարավ՝ դեպի իրան կգնա թե հյուսիս: Բայց ավաղ: Մինչև Բաքու հասնելը գնացքը Բալաշարից թեքվեց դեպի հյուսիս: Այժմ ամեն ինչ պարզ էր:

19-ին. Շատերին է ձանձրացրել այս միապաղաղ կյանքը: Կարճես ես էլ եմ ձանձրացել: Սակայն երբ տղաները պարապմունքից վերադառնում են սկսում եմ իմ մանկական կատակները: Ամեն Օր աշխույժ եմ: Զոր ցուրտ եղանակ է: Շատ անգամ ցրտության առիթով այնպես եմ գրգռում տղաներին, որ ամբողջ բաժնակները իրենց շուրջն են հավաքում: Այսօր գրգռեցի ստ. սերժ. Ասատուրովին , ,գրողնի, , Մատինյանի հետ: Մի փոքր վիճելուց, այսինքն յուրաքանչյուրն իր պարճենկոտությունը վերջացնելով սկսեցին կոխը: Ես հաստատ համոզված էի, որ Ասատուրովն է անպայման հաղթելու, սակայն Մատինյանը խիստեկով ըմբռամարտի բոլոր կանոնները |հավանական է չգիտեր էլ այդ Օրենքները|, գյուղական կոպիտ , ,կոխով, , տապալեց, համարյա , ,քառակուսի, , երիտասարդին: Ասատուրովը խիստ բարկացած էր: Շա մի քանի անգամ կրկին մարտակոչեց, սակայն արձագանք չգտավ: Այսօր վաշտը պահակային ճառայության մեջ մտավ:

Երեկոյան կապտոյորկան էին հավաքվել մի քանի հոգի կոշկակար Ղուկասով Ավետիսը և այլք: Խոսուում ու սրախոսուում էինք: Կարծես մի ներքին ուժ ստիպեց ինձ ասելու՝ , Արդյոք ուղիղ մեկ տարի հետո ճիշտ այս նույն Օրը երկիրն ինչ դրութեան կ'լինի և մեզանից որ մեկն կ'ենդանի կ'լինի, հիշելու այս Օրը, : Եվ իրոք շատ եմ փափագում դրանցից մեկը ես լինեմ, որպեսզի 1943 թ. դեկտեմբերի 19-ին Օրագիրս լցնելիս հիշեմ այս Օրն ու ժամփոփեմ մի տարվա անց ու դարձը ու այն բոլոր փոփոխութեաններն, որոնք տեղի են ունեցել այդ ժամանակամիջոցում: Այս տողերը գրելիս փոշտացի գուցե դա ինչպես ասումս են , խեր է, , / հենվում եմ կրօնապաշտութեանը / :

Ուղիղ մեկ տարի առաջ:

Դեռևս գնացքում էինք: Կարծեմ երեկ չէ մյուս Օրն էր, որ գիշերը ճաշեցինք Մախաչկալայում: Գնացքում լավ էին պահում: Ուտեւիքի կողմից չէինք դժգոհում, նույնը և մախորկայի կողմից: Հիշում եմ անցնում էինք Մոզդուկից, ցուրտ էր: Ես պատուհանից դիտում էի քաղաքը, որն ինձ շատ դուր եկավ. հատկապես քաղաքի կենտրոնում կառուցված սլավոնական եկեղեցին, որն իր հնադարյան գլուխը թագցրած ամպերի մեջ, իր վեհութեամբ իշխում էր ամբողջ քաղաքին:

Մտածում էի, արդյոք կվերադառնամ կրկին տեսնելու այս քաղաքը:

21-ին. Այս տողերը գրում եմ տրամադրութեանս սաստիկ ընկած ժամանակ: Այս Օր վաշտի հրամանատար ավագ լեքտեանտ Գրեցենկոն, այն ժամանակ, երբ վաշտը գտնվում էր ճաշարանում ներս մտավ կապտերկան / որտեղ աշխատում էի / : Առաջին իսկ հայացքից նկատեցի, որ սարսափելի կատաղած է: Ճաշարանից վաշտը վերադարձավ շատ ուշ: Երբ ստարշինան ներս մտավ, նա իսկույն պոռթկաց ու բաց անելով զայրույթի տոպրակը սկսեց թափել նրա վրա: Այնպես էր գուռում ու բռնեցքով խփում սեղանին, որ ճրագը մի թիզ բարձրանում ու ընկնում էր սեղանին սպառնալով հանգչել: Ես ցասումիցս ինձ ուտում էի: Սակայն ստարշինան համբերատար լուում էր ու երբ փորձ էր անում արդարանալու, դեռ առաջին բառը չարտասանած, ընդհատում էր ձայնն ավելի բարձրացնելով: Զարմանալի է այդ մարդու բնավորութեանն այսպիսի րոպեներին: Նա կարծես թե կորցնում է մարդկային բոլոր զգացմունքները և հատկութեանը, վեր է անվում մի գազազած ամեհի գազանի, որը պատրաստ է այդ վայրկյանին հոշտեւել դիմացինին, թեկուզ դա լինի իր հարազատ ձագը: Այդ մոմենտին ես հուզուս ամբողջ գորութեամբ ատում եմ այդ գինեմուղ ու այլասերված մարդուն, որն Օղին գնահատում է իր կյանքից ու պատվից ավելի բարձր: Զեմ հիշում մեկ Օր, որ նա գործածած չլինի այդ դառնահամ ջուրը: Սակայն որքան էլ խմում է, այնուամենայնիվ նա իր նապաստակի զգուշութեանը չի կորցնում, հանդիպելով որևէ բարձրաստիճան անձնավորութեան հետ: Օղու ազդեցութեան տակ դառնում է շատ դյուրագրգիռ կամ շատ ուրախ մի տիկնիկ, որին կարելի է ամեն կերպ շրջել ու խաղացնել:

Այսօր նա բարկացավ նաև ինձ վրա, որովհետև ես լապտերը տվեցի էի ինտեն-
դանտ Սուքիասյանին խախտելով Դավթյանի հրամանը: Նա ինձ հրամայեց, որ իս-
կույն գնամ ետ բերեմ: Ես գնացի մոտ կես ժամ պտտվեցի ապարդյուն սառնամանի-
քում ու վերադարձա Սուքիասյանը գնացեւ էր Երևան: Դուանը սպասեցի այնքան
ժամանակ մինչև նրանք դուրս եկան: Ներս գալով սկսեցի նորից աշխատել: Մոտ
կես ժամից հետո նորից եկավ, բայց այժմ արդեն այն զարհուրելի մարդը չէր
գայլի պես փայլող անքերով: Նա հարցրեց ստարշինային, արդյոք հո չ'ի նեղա-
ցել իրենից և սկսեց խոցհուրդներ տալ: Այնուհետև դիմեց ինձ, նորից լապտե-
րի խնդրով և ժպտը երեսին ասաց, որ վաղը բերեմ | դեմքին կարգացվում էր
կեղծ պահանջկոտություն: Դրանով նա ինձ համարյա զինաթափ արեց: Բայց և այն-
պես զգում եմ, որ թույն է հավաքվում սրտումս և վաղ թե ուշ պետք է թափեմ
նրա վրա:

Ուղիղ մեկ տարի առաջ:

Հիշում եմ դեռ երեկ վորոշիլովգրադում էինք: Սենդի մատակարարումը վատա-
ցավ: Ստիպված մխորկան, որի տուփը գնահատվում էր 150-ից 200 ու փոխարինե-
ցինք հացի հետ: Այդտեղ մեզ 100 հոգուս բաժանեցին և տեղավորեցին առանձին վ
վագոնում, այդտեղ ես բաժանվեցի Նալբանդյան խորենից: Երեկոյան գնացքը կանգ-
առավ Շեպիլովա կոչվող կայարանում: Մենք ցած իջանք և սկսեցինք ոտքով շարու-
նակել ճանապարհը: Սարսափելի ցուրտ էր: Ճանապարհը ծածկված էր սառույցով,
հազիվ էինք առաջանում, այն էլ սայթաքելով: Հիշում եմ ճանապարհին մեկ ավ-
տոմեքենա ընկել էր փոսը: Մենք դատարկելով արկերն ու դուրս հանելով փոսից
մեքենան, բռնեցինք արկերը ու շարունակեցինք ճանապարհը: Հասանք իվանովո
գյուղը, ցրվելով մի քանի խմբերի գիշերեցինք առաջին պատահած տներում:
23-ին. Առավոտյան ստարշինային կանչեցին շտաբ: Մի փոքր անց ուրախ-ուրախ
վերադարձավ և սկսեց ճանապարհի պատրաստություն տեսնել: Նրան շտաբը 6-0ր
արձակուրդ էր տվել մեկնելու թբիլիսի իր հարազատների մոտ: Նա ինձ հանձնեց
բոլոր գործերն ու սկսեց խորհուրդներ տալ: Մեկնելիս ամուր սեղմեց ձեռքս և
ասաց, որ լավ նայեմ ինձ հանձնած առանց մի որևէ փաստաթղթի իրերին: Ես ան-
կեղծ հաջողություն ցանկացա նրան, խոստանալով բոլոր պատգամները կատարել:

Գնալուց հետո անցա գործի, կարգավորեցի կապոյոցկան և պատրաստվեցի կազ-
մակերպել վաշտի կերակրումը: Ճիշտն ասած դժվար է և գրագրություն անել և
ստարշինայի փոխարեն աշխատել, սակայն որոշել եմ համառորեն աշխատել այս մի
քանի օրը, մինչև նա վերադառնա: Առավոտյան շատ անելիքներ ունեմ: Կոշկակար
Ղուկասովը մինչև նրա վերադարձը ինձ մոտ է լինելու:

Ուղիղ մեկ տարի առաջ:

Երեք օր անընդհատ սոված ծարավ չափում էինք Ուկրաինայի հողը, որոնեւթվ
շտաբ զիվիզիան: Վերջապես հաջողվեց գտնել շտաբը, որը տեղավորված էր Զոլո-

տորևկա գյուղում: Այնտեղ գիշերելով բնակիչների տներում, առավոտյան անցնելով 18 կմ. ճանապարհ, հասանք Պրոլետարսկ կոչվող քաղաքը, որտեղ մի առ ժամանակ պետք է մնաինք:

1 9 4 3

Հ ՈՒ Ն Վ Ա Ր

5-ին. Դեկտեմբերի 30-ին ստարշինան վերադարձավ Թբիլիսից: Ամեն ինչ իր տեղը գտնելով շատ ուրախացավ: Ամսի երեքին նա նորից գնաց կոմանդիրովկա՝ Ղափան, մինչև ամսի 9-ը ժամանակով: Նրա փոխարեն Թողեցինք սերժանտ Խաչատրյանին: Իհարկե այս Օրերն այդպես սահուն չեն անցել, բայց քանի որ տեղի ունեցած իրադրությունների զարգացումն արագանում է, ուստի շտապում եմ, Թողնելով անցյալը խավարի մեջ: Երեկ /4-ին/ առավոտյան ձյուն էր եկել 2 սմ. խորութեամբ, որն իսկույն հալվեց ձմեռային անձրևի արևի տակ: Այսօր եղանակը շատ տաք է ու նորութուններով լի: Առավոտյան հանձնեցինք բոլոր վարժական զենքերն ու իրերը: Վաշտի հրամանատարը ստացավ հեռադիտակ: Հավանական է վաղը երկրորդ գնդացիքը ստանանք և 1500 զենակ: Վաշտը գտնվում է պահակային ճառագույն մեջ: Շատերն են հուզված: Երկու հեռագիր ուղարկվեց Մնացականյան Արտավազդի վրա /Սպիտակի շրջան գյուղ Մեծ Պարնի/, որպեսզի շտապ վերադառնա: Մի փոքր առաջ Երևանից վերադարձավ Դավթյանը և մեկ հեռագիր էլ ուղարկեցինք ստարշինայի վրա, որպեսզի նա վերադառնա:

Տեսնենք սրա վերջն ինչ կստացվի:

Վերջին տողը փչացրեց Խաչատուրովը, որպես հիշատակ իր հուզված ընկերներին արտասանելով. «, Էի Օրագիր-Քրագիր, եթե քո Թերթերը Օտար երկրում քամին տանի, »: Ազդեցիկ խոսքեր էին բայց դաժան: Զէի ցանկանա այդ բախտին արժանանալ:

6-ին. Այսօր առավոտյան կռակեցինք 5-րդ վարժությունը: Հանձնեցինք բոլոր անկողնային իրերը: Երեկոյան պարտիական և կոմսոմոլի ժողովներում բացեիբաց հայտնեցին, որ մեկնում ենք ճակատ և շոշափեցին մեր անելիքները ճանապարհին:

7-ին. Լույս 7-ի գիշերվա ժամը 2-ն էր, երբ ես ու Խաչատրյանը մի քանի հեքիաթ պատմելուց հետո քիչ քիչ մնում խորասուզվել քնի մեջ, երբ դրսում լսվեց ստարշինայի ձայնը: Նա Երևանից հետ էր վերադարձել: Առավոտյան ամբողջ գումարտակը եռ ու զեռի մեջ էր: Գնդացիի շրթաները լցրինք գնդակներով, որպեսզի էշալոնին ապահովենք Օդային հարձակումից: Հրաման ստացվեց, որ գիշերվա 3-ին պետք է վեր կենանք, նախաճաշենք և շարժվենք դեպի կայարան: Մեկնելու բոլոր նախապատրաստական աշխատանքները կատարված են: Բոլոր ավելորդ փաստաթղթերն այրեցինք, իսկ պետքականները տեղավորեցինք տպարակի մեջ: Գիշերվա ժամը 12-ը կլինի. չենք մտածում քնել:

Ուղիղ մեկ տարի առաջ:

Հենց այս նույն ժամին անցնում էինք մինչև ժնկները հասնող ձյան անապատով և շարժվում էինք առաջնային գիծը:

Շատ քիչ հուզված էի:

9-ին. Երեկ գիշերվա ժամը 3-ին վեր կացանք: Մաքրված անպիտան փաստաթղթերը վառեցինք: Ես և Ջավադը շտապեցինք սայլակների հետևից: Մինչ մեր վերադառնալը վաշտն արդեն գնացել էր: Նստեցինք սայլակներին ու առաջացանք կայարան: Տեղ հասնելով նկատեցինք, որ Դավթյանի ագիտ-պայուսակը մոռացել ենք վերցնել: Ես իսկույն հեծա մի տկլոր ձի ու սլացա նորից սովխող: Հասա տեղ դեռ մոռացել էր: Պայուսակը գտա ու նստեցի մի փոքր, որպեսզի ձին հանգստանա: Որովհետև հետույքս ցավում էր, շինելս գցեցի ձիու վրա ու նորից շարունակեցի ճանապարհս: Հասա կայարան արդեն լուսանում էր: Սայլերն ու ձիերը տեղավորեցինք գնացքում: Յերեկվա մոտ ժամը 12-ին շարժվեցինք: Սարսափելի սոված էինք: Մինչև Լենինական այնտեղ տվին մաքրված Օրվա հացն ու կաշան: Ռուշանյան վռամն ու Սիմոնյան Սուրենը ճանապարհին հանդիպելու համար հարազատներին: Բոլագիրան կայարանում Մատինյանին հանդիպման էին ելել համարյա մաքրված գերդաստանը, մեծից մինչև փոքրը, սակայն գնացքը համարյա չկանգնեց: Նրանք աղիոզորմ աղաղակներ բարձրացնելով վազում էին գնացքի կողքով: Երբ վերջապես գնացքը կանգ առավ Մատինյան Անդրանիկը վայր իջավ: Հարազատներն այնպիսի աղմուկ էին բարձրացրել, որ Դեմեթրի ձայնը խլացել էր գիշերային լուռության մեջ: Այսօր առավոտյան դեռ մոռացել էր, որ Թբիլիսից շարժվեցինք: Հավանական է այժմ կգնանք Սուխումիի ուղղությամբ: Խաշուրի կայարանում մեկ շիշ գինի առա: Անցա վաղեմի ճանոթ Շորապանի կայարանով, անցանք նաև Ռիոնը և Թոլնեկով Գուրայիսը ձախ կողմում առաջացանք: Զգիտեմ ինչու վաշտի հրամանատարը ինձ հետ չավելեց, եթե մինչև վերջ նա այդպես թթու վերաբերմունք ունենա ինձ հետ, ապա անկասկած մի անսխորժություն կպատահի: Թբիլիսիում մեզանից հետ մնացին Ղալաֆյան Արտաշեսը, Միրզոյան Ռուբենը ու Մազամեդով Կուրբանը: Ուղիղ մեկ տարի առաջ գտնվում էի Ուկրաինական իվանոգրակա գյուղում:

13-ին. Մասույս 10-ին արդեն մոռացել էր, որ իջանք Սուխումում: Բեռնաթափելով գնացքներն ու մի փոքր հանգստանալուց հետո շարժվեցինք ժովի երկարությամբ դեպի հյուսիս: Անցնելով մոտ 8-9 կմ. ճանապարհ, պառկեցինք ճանապարհի կողքի թփուտներում և քամու տակ մի կերպ լուսացրինք: Սուխումյան նորից շարունակեցինք ճանապարհը անցանք, Նովի Աֆոնը, և շարունակեցինք ճանապարհը, բոլորն էլ սարսափելի հոգնած էին: Հասնելով մի գյուղ, բոլորս էլ տեղավորվեցինք ճանապարհի կողքերին և սկսեցինք կրակ վառել: Սակայն շտաբի պետ կապիտան Լիսիչևիչն արգելեց: Մեզ հաջողվեց ձեռք բերել մոտ մեկ վեդրո գինի, որից ինձ հասավ 3 բաժակ և մեկ բակլաշկա: Լավ էի զգում

ինձ, բայց նորից հոգնած էի: Գիշերելու համար ես, ստարշինան և վաշտի հրամանատարը տեղավորվեցինք սայլակի տակ: Գիշերը զարթնեցի սարսուռ զգալով: Բանից դուրս եկավ, որ ուժեղ անձրև ու քամի է տեղում: Զուրը տակովս առավակ էր կապել: Ես ինձ կորցրել էի. մոտեցա մյուսներին և առաջարկեցի Ալանյանին և Մնացականյանին գնալ մեկ տուն և գիշերել այնտեղ: Մեզ այդ հաջողվեց անել: Դեռ նոր էինք պառկել չոր հատակին, երբ վաշտի հրամանատարը թրջված մկան պես ներս մտավ: Նրան ևս տեղավորվեցինք: Առավոտյան նորից շարունակեցինք ճանապարհը և անցնելով մոտ 33 կմ. հասանք մի մեծ ավան, որտեղ և գրում եմ այս տողերը: Ճանապարհին սաստիկ անձրև էր տեղում: Բուրոս էլ մահվան աստիճանի հոգնած էինք: Շատերը հետ մնացին ստիպված սայլակի վրա դրինք: Թրջված տեղ հասնելով տեղավորվեցինք դպրոցի շենքում: Կարճես ոտքերս վերքապատված լինեին: Այս ամբողջ հոգնատանջ ճանապարհին չէի գլանում երգել ու կատակներ անել: Մինչև Գազրա մնացել է մոտ 20-21 կմ: Շուտով կշարժվենք նորից առաջ:

Գիշերը ձյուն էր եկել:

15-ին. Ամսույս 13-ին անցնելով մոտավորապես 25-ից ավելի կմ. ճանապարհ հասանք Գազրի և տեղավորվեցինք սանտորիայի շենքերից մեկում: Գիշերն անց կացրինք շատ հանգիստ, չնայած շորերս թաց էին: 14-ին ամբողջ Օրը հանգիստ էինք: Երեկոյան մի քանի հոգով գնացինք բաղնիք: Շատ հիանալի լողացանք, բայց նոր ներքնաշորեր չկային: Այսօր վաշտը թովափին պարապունք է անցկացնում: Այստեղ երևի մի քանի Օր էլ մնանք, որովհետև բոլորը պետք է լողանան և երկրորդն ամբողջ բրիգադան հավաքվել է այստեղ:

Տրամադրությունս նորմալ է: Հավանական է այստեղից նորից շարժվելու ենք հյուսիս, դեպի Տուսիս: Պարզ չէ նավով թե գնացքով:

Այսպիսով Սուխում-Շուվի-Աֆոն-Գուդաուդի-Գազրի ճանապարհն անցանք 3 Օրում կտրելով ընդամենը մոտ 130 կմ. տարածություն:

16-ին. Գիշերը քնեցի շատ խաղաղ:

Վաշտը գնաց պարապունքի: Օգտվելով առիթից ես անցա առաջին դասակի սենյակը և քնեցի այնտեղ:

Երազումս տեսա եղբորս՝ Մելիքին, իբրև հանդիպում եմ կայարանում իբրև ես էլ եմ մեկնում ճակատ նա էլ և իբր նա ստացել է կրտսեր լեյտենանտի կոչում: Ես նրան հրավիրում եմ տուն և ի զարմանս, միայն մայրս է գրկախառնվում մեզ: Եղբորս հետ, իսկ մյուսները կանգնած միայն ժպտում են: Այդտեղ եղբայրս ինձ բացատրեց, որ մինչև իմ գալստ նա ճանդիպել է մյուսներին: Շատ երջանիկ էի զգում ինձ: Կցանկանամ այդ երազն իրականություն դառնա: Այսօր բրիգադայից հրաման ստացվեց, որ մեր կոմունիստներին 1. Ստեփանյան Արմենին, 2. Գյուրջյան Խաչատուրին, 3. Ավալյան Գրիգորին,

4. Միմոնյան Սուրենին և 5. Ռոստոմյան կարապետին տեղափոխում են ուրիշ գումարտակներ:

22-ին. Ես, ստարշինան և Արզումանյանը նկարվեցինք: Նկարն ուզում էի ուղարկել տուն, բայց երբ սկսեցի նամակ գրել, չիմացա ինչ գրեմ, ջղայնացա և պատուեցի: Նկարը մնաց մոտս:

25-ին. Մասույս 23-ի լույս 24-ի գիշերվա ժամը 12-ին շարժվեցինք դեպի կայարան: Բարձեցինք սայլերն ապրանքատար գնացքին: Ես և ստարշինան, որովհետև վագոնում տեղ չկար պառկեցինք սայլերից կազմված երկհարկի վրա և մաքուր Օդում խումիացրինք: Լուսադեմին գնացքը շարժվեց: Բամի կուռ տալով անցնում էինք մերձ ծովափնյա կղաններով: Աղբեր կայարանից հետո նկատվում էր ճակատի հետքերը:

Արդեն մութն ընկնում էր երբ հասանք Տուափսե: Մաստիկ քամի էր բարձրացել ծովն ալեկոծվում ու լափում էր փերը: Բեռնաթափելով գնացքը շարժվեցինք որոնելու գիշերավայր: Սակայն ցավոք սրտի չկարողացանք գտնել մի շենք չկար որը կանգուն լիներ: Տառացիորեն ամբողջ քաղաքն ավերված էր:

Գիշերը խավար մթության մեջ խարխափելով մինչև ժնկները հասնող ցեխերում, ընդհարվելով ավերակների բեկորներին շարժվում էինք: Վերջապես տեղավորվեցինք նավահանգստին մոտ մի նախկին գործարանի շենքում, որը շատ թե քիչ պաշտպանում էր քամուց: Իսկույն ևեթ բոցավառվեցին կրակներն ու սկսեցինք ոտքերներս ու հագուստներս չորացնել: Հարմար տեղ չգտնելու պատճառով գիշերը չկարողացա նորմալ հանգիստ առնել: Այսօր քամին դադարեց: Իմիջիայլոց ամբողջ գիշերն անձրև եկավ, որն այժմ էլ շարունակվում է: Ենթադրություններ կան, որ այստեղից հեռևակն առաջ է շարժվելու 60 սպասվող ավտոմեքենայով, իսկ գումակը ջրային ճանապարհով: Բայց այլ կերպ եղավ:

Առայժմ հայտնի չէ թե երբ ենք շարժվելու:

Բ. Տուափսե

Փ Ե Տ Ր Վ Ա Ր

3-ին. Մինչև այսօր ահագին նորություններ են տեղի ունեցել, բայց քանի որ Օրագիրս թողել էի սայլի վրա և միայն այսօր ստացա ի վիճակի չէի լրացնել: Ուստի ցանկանում եմ համառոտ գրել այս մի քանի Օրվա նորությունները: Հունվարի 25-ի լույս 26-ի գիշերվա ժամը 2-ին վեր կացանք ու շարժվեցինք հասարակական նավահանգիստը: Եղանակը շատ անբարենպաստ էր՝ սաստիկ ձյունախառը քամի, որը կարծես թե մտադրվել էր տեղն ու տեղը չորացնել առանց այն էլ սառած թափորը: Նստեցինք, «կրասնիյ Աջարեստան», նավը, որը բերնե բերան լիքն էր: Մեր վաշտը համարյա մնաց դրսում: Ինձ հաջողվեց ընկնել դահլիճներից մեկը և կանգնած վիճակում մի փոքր տաքանալ, բայց այստեղ էլ կարծես բաղնիք լիներ: Հոգնածությունն ու սովը կռճում էր ոսկոռներս: Դուրս

գալով դահլիճից հաջողվեց ինձ երկու կտոր սուխարի թուցենել: Վերջապես հասանք Ջուբա թովաինյա ավանը: Նավն ահագին հեռու կանգնեց ափից: Տեղավորվելով կատերների վրա իջանք ափ: Ակսեցինք ճաշ եփել ու շորեր չորացնել: Այդտեղից ես և ստարչինան հետ մնացինք, որովհետև գնդացիքը մնացել էր սայլուս: Երեկոյան մոտ ժամը 9-ին սայլերն եկան: Զկտրած 2 կմ. ճանապարհ կանգնեցրին սայլերը, որպեսզի ճանապարհ տան դիմացից եկող շարասյանը: Ստիպված սկսեցինք ճանապարհը ոտքով շարունակել, այնուհետև ավտոյով: Վերջապես հասանք Ջուբա: Գտանք վաշտն ու լուսացրինք կրակի կողքին: Այժմ սպասում ենք կարգադրութայն: Դեռևս չգիտենք թե ուր ենք գնում:

11-ին. Գտնվում ենք նույն տեղում: Պատրաստել ենք |Չախերից| վրանաձև տնակներ ու ներսը կրակ վառած ապրում ենք: Ահա երեք Օր է ինչ սաստիկ հյուսիսային ցուրտ քամի է փչում, տնակները քամուց չեն փրկում: Գիշերն անց ենք կացնում շատ անհանգիստ, վերհիշելով տան փափուկ ու տաք անկողինը: Միայն կրակն է, որ մի փոքր պաշտպանում է ցրտից: Այնքան ենք մոտեցել կրակին, որ չկա մեկը, որն իր շորերը վառած չլինի: Մեր երեք ձիապանները վերադարձել են վաշտ, որովհետև նրանց ձիերը սատկել են: Իմիջիայլոց այս երկրում շատ դժվարություններ կրեցինք, շատերը չկարողացան դիմադրել ու վաղաժամ զոհ գնացին: Նորակոչիկ 23 թվի ժնվածները ամեն Օր լաց են լինում, չհամբերելով ցրտին ու հոգնածութայնը: Երևի դրանց մեզանից տանեն թիկունք: Ցուրտ է ընդհատում եմ գրելս:

Ջուբա

Այսօր 3-րդ վաշտից մեկին գնդակահարություն որոշեցին, որովհետև դիտավորյալ ավտոմատով կրակել էր ոտին:

13-ին. Երեկ տանից ստացա՛մ մեկ նամակ, որի պատասխանն ուղարկեցի այսօր Գաբրուս նկարված նկարի հետ միասին: Երեկ հատուկ հրամանի համաձայն մեր վաշտից առանձնացվեց 35 հոգի և ուղարկվեց մարզովի գլխավաշտեր ուր լավ տղաներից զրկվեցինք: Այսօր երևի նրանք հեռանան այստեղից: Վաշտում մնացել ենք 21 հոգի: Այսօր էլ ավագ լեյտենանտ Դավթյանը հրաժեշտ տվեց ու գնաց Մեդ. սան. բառ: Այժմ չգիտենք թե մեզ հետ ինչպես պետք է վարվեն: Հազար կարծիքներ ենք անում:

Ջուբա

Այս 10-ը Օրվա ընթացքում ահագին փոփոխություններ կատարվեցին: Քաշտի հրամանատարը ստացավ նոր պաշտոն, ,զամ. կոմ. բառ, , Նրա փոխարեն եկավ մեր նախկին, ,զամ.կոմ.բառ,,-ը Մուխոբրտովը, որը դեռ մեկ Օր չսպասած հիվանդության պատճառով ուղարկեցին Թբիլիսի: Նրա հետ 2 նամակ գրեցի տան և քրոջս վրա: Այժմ վաշտում մնացել է միայն Բաղդասարյանը, որպես միջին հրամ.կազմ: Այսօր նորից 6 հոգի ուղարկեցին մարզովի վաշտ: Ընդամենը վաշտում մնացել ենք 14 հոգի: Այս քանի Օրը 400 ու ուղարկեցի տուն:

|Մեզ արդեն հայտնի էր, որ մեր բրիգադան կցված է Սև-ժովյան զորքերի խմբա-
որմանը և որ մենք գնում ենք ճանապարհ պատրաստեզու|: Այդ հոգետանջ 16 կմ.
անցանք անասելի դժվարություններով և վերջապես հասանք Պեֆոնովկա գյուղը
արդեն մութը պատած:

Հանգստանալու ոչ մի տեղ չգտնելով բաժանվեցինք իրարից և մի կերպ լու-
սացրինք:

27-ին. Լուսաբացին ամբողջ վաշտը հավաքվեց մի սարայի տակ և սպասեցինք մթերքի:
Մինչև մթերք ստանալը մոտ մեկ կգ. ձիու միս կերա, որը շատ համեղ թվաց:
Այդտեղ կազդուրվելուց հետո գյուղից մոտ 2 կմ. հեռացանք և անտառում գիշե-
րելու պատրաստություն տեսանք: Պետք է ասել, որ սկսած Սուխումից մինչև
այստեղ մեր շարժումը միշտ անտառներով է եղել: Ամբողջ սարերն ու դաշտերը
անտառապատ են և հողագործության համար անբարենպաստ վայրեր: 28-ին նորից
շարունակեցինք ճանապարհը, չհասնելով մեր կանգառին նորից անտառում կրակ
վառեցինք ու մի կերպ լուսացրինք: Ամբողջ գիշեր ձյուն էր գալիս ու հալվե-
լով կրակի տակ թրջում մեզ:

29-ին. Կեսորին հասանք նշված վայրն ու գործի անցանք: Մի մասն իսկույն գնաց
ճանապարհի վրա աշխատելու, իսկ մյուսն սկսեց տնակներ պատրաստել: Ամսի
30-ից մինչև այժմ նորմալ կերպով անցել ենք աշխատանքի: Ստարշինան այս էլ
երկրորդ անգամն է գնում է 18 կմ. վրա մթերք բերելու: Այսօր քանի որ մեր
տրանսպորտը մոտեցել է մեզ, ապա հույս կա որ լավ կլինենք: Ստարշինան ժանր
բեռնավորված, հոգնած վերադարձավ: Ստացանք 3. Օրվա մթերք: Երեկ լեյտենանտ
Սիմանչուկն ու Նազարյան խաչոն |Սպիտակի շրջ. գյուղ Պարնի| հիվանդության
պատճառով տեղափոխվեցին թիկունք: Հավանական է այլևս չվերադառնան:

Ամսույս 5-ին ստարշինան առավոտը շուտ նորից գնաց Ստորոժավայա գյուղը
մթերքի: Ես գնացի աշխատանքի: Կեսօրին հրաման ստացվեց թողնել աշխատանքն
ու նախաճատրաստվել շարժման: Ժամը երեքին առաջացանք: Բեռս շատ ծանր էր,
որովհետև շալակել էի ստարշինայի իրերը ևս: Ճանապարհին հանդիպեցինք ստար-
շինային և նորից նրանց հետ դարձրինք: Մութն արդեն պատել էր: Ցեխի պատճա-
ռով ճանապարհը դժվարանցելի էր: Մեկ անգամ արդեն գլխիս վրա ընկա ցեխի մեջ
և ոտքից մինչև գլուխ կեղտոտվեցի: Մարմինս սառել էր: Շատ ողորմելի վիճա-
կում էի գտնվում: Երբ ճանապարհի վերելքը վեր աժվեց խիստ վայրէջքի, այլևս
հնարավոր չէր շարժվել: Թեքվելով ճանապարհից սկսեցինք մի կերպ կրակներ
վառել: Մի կողմից անձրև էր գալիս իսկ մյուս կողմից շորերս էինք չորացը-
նում: Իմիջիայլոց ամբողջ 5-ի առավոտից մինչև 6-ի կեսօրը անձրև տեղաց,
որից հետո ձյուն: Ստորոժավայա գյուղում գինի բաժանեցին: Մինչև ճաշ ան-
ցանք Պեֆոնովկա գյուղը:

5-ին: Երեկ ժամը 23-ին անսպասելի հրամանով ձևակերպեցինք խաչատրյան Գրիգորի
գործերն ու այսօր առավոտյան ուղարկեցինք մարշովիյ վաշտ: Վաշտում մնացել
ենք ընդամենը 13 հոգի: Այսօր շտաբի պետը կարդաց Մեծ Ստալինի հրամանը

նվիրված կարմիր Բանակի 25-րդ տարեդարձին: Այս քանի օրն սպասում ենք լրացման:

28-ին. Երեկ ճաշից հետո անսպասելի կերպով դողացրի: Սմբողջ գիշերն անհանգիստ էի, դողից հետո սաստիկ քրտնեւ էի: Գիշերը համարյա հագուստիս կեսն այրվեց: Երեկ հրաման ստացվեց, որ այսօր ժամը 17-ին ճանապարհվում ենք այստեղից: Զենքի մեծ մասը 3 հոգու հետ ուղարկել ենք ճանապարհի մոտ, որպեսզի պատահական ավտոյով տեղափոխենք: Սմբողջ գիշերն սպասել են, բայց ապարդյուն մեքենա չի եղել, դեռ այժմ էլ ճանապարհի վրա է: Շատերն ասում են իբրև գնում ենք Տուսփսե, շատերը՝ Սուչի, իսկ մյուսներն էլ թե խորը թիկունք Բայց փաստն այն է, որ Սև ծովյան խմբավորումից դուրս ենք եկել: Մեր գումարտակի հրամանատար կապիտան Տալաշկոյին շնորհել են մայրուի կոչում և մեզանից վերցրել: Այժմ նրա փոխարեն Գրեցենկուն է որպես գումարտակի հրամանատար:

Մ Ա Ր Տ

Յորգիրս ակաբում-եմ շարունակում է սկսած փետրվարի 28-ից: 28-ին ճիշտ ժամը 17-ին թողեցինք Ղուբգան և ուրո ճանապարհներով շարժվեցինք դեպի Տուսփսե, որը ծովով 52 կմ. է, իսկ ցամաքով 79-ից ավելի: Մինչև գիշերվա ժամը 2-ը կտրեցինք մոտ 29 կմ. ճանապարհ: Կանգ առանք Նովո-Միխայլովկա գյուղից դուրս ու ճանապարհի ձախ կողմում երկու ահռելի ընկուզենիների տակ պատրաստվեցինք գիշերելու: Առավոտյան նորից զվարթացած շարունակեցինք ճանապարհը: Չանցած 5 կմ. ինժ հաջողվեց ընկնել մեկ ավտոմեքենա և մինչև Տուսփսե ավտոմատնի վաշտի սան ինստրուկտոր Եղիազարովի և լեյտենանտ Գալոյանի հետ գնացի: Հետս վերցրել էի միայն ավտոմատս: Գումարտակն արդեն գտնվում էր կայարանում: Եղիազարովին թույլատրվեց նրանց պահեստից ձեռք գցել մեկ բուխանկա հաց և մեկ բաժակ շաքար: Կարծես իմ բախտից նա կայարանում պատահական կերպով հանդիպեց իր մոտիկ բարեկամներից մեկ կնոջ, որը վաճառում էր սև սալոր հատը մեկ ռուբլի: Նա մեզ հրավիրեց իրենց տուն: Ամուսինը ռմբակոծման ժամանակ մնացել էր փլվածքի տակ և վնասեց էր ոտքը: Ճաշից հետո նորից դողս բռնեց և շատ երկար չարչարեց: Որպես հիվանդի քնացրին փեփուկ անկողնում: Առաջին անգամ շորահանվեցի: Առավոտյան լավ էի զգում ինձ: Տղաները քիչ քիչ հավաքվեցին: Շուտով եկավ և գումարտակը: Զենքերը ևս տեղ հասան: 2-ի լույս 3-ի գիշերն անց կացրինք կայարանի մոտ ավերված նախկին պահեստում: Բաղաքի կոմենդանտն արգելեց կրակներ վառել և ահա այդտեղ քիչ մնաց կյանքիս թելը կտրվեր: Գիշերն անց կացրի շատ անհաջող:

Ժամը 18-ին սկսեցինք բարձել էշալունը, որը շարժվեց շատ ուշ: Եղանակը շատ վատ էր՝ անձրև ու քամի: Հասանք Սուչի ժամը 4-ին, բայց բեռնաթափվեցինք լուսադեմին ուժեղ անձրևի տակ ու շարժվեցինք առաջ դեպի Մամայկա, որը հազիվ 10 կմ. հեռու լիներ: Ճանապարհին անձրևն ամպպես սաստկացավ, որ թիկնոցն հազիվ էր պաշտպանում: Այնուամենայնիվ փաթաթաները /ոտքի/ թրջվեցին և կոշիկների մեջ ջուրն սկսեց ճողփալ:

Մոտ մեկ ժամ տևող անձրևից հետո սկսվեց փաթիլ-փաթիլ ձյուն թափվել ու մոտ 10 սմ. նստեց գետնին: Մի կերպ հասանք Մամայկա և հազիվ մինչև մութն ընկնելը կարողացանք չորանալ: Շուշն 0րն ևեթ /4/ որպես լրացում եկան 2 միջին հրամ. կազմ: Մեկը լեյտենանտ Այդինյան Հակոբը /Լեյտենանտ ինտերնացիոնալի նո. 7/, որպես Չամ.կոմ.ուոտ, մյուսը ռուս կրտսեր լեյտենանտ, որպես 3-րդ դասակի հրամանատար: 5-ին եկավ նորից մեկ լծովային կրտսեր լեյտենանտ՝ Բարբարիչ, որպես 2-րդ դասակի հրամանատար, իսկ 6-ին եկավ մի լեյտենանտ, որի ընտանիքն ապրում էր Սոչիում, որպես վաշտի հրամանատար ազգանունը Վաշենկո: Այսպիսով ունենք 5 միջին հրամկազմ: Պակասում է միայն քաղղեկը: 6-ին Արփիկից և Ժենյայից նամակ ստացա: Երեկ պատասխանը գրեցի, բայց դեռ ինձ մոտ է: Մի քանի հոգով ապրում ենք շատ հաջող սենյակում: Բայց ափսոս մի քիչ ցուրտ է լինում:

12-ին. Ամսույս 9-ին ստացանք լրացում 8 հայ բանակայիններ, իսկ 10-ին եկավ որպես վաշտի հրամանատարի Օգնական /քաղղեկ/ կոչումով ավագ Բարանովը: Շուշն 0րը ստացանք նաև 17 հոգի, որոնցից մեկը վրացի /Գեգուչաձե/ ավագ սերժանտ, որն այժմ 2-րդ դասակի, 3-րդ ջոկի հրամանատարի տեղակալն է այսինքն՝ իմ:

24-ին. Մինչև այսօր նորմալ պարապմունքներ էին անցնում: Երկու անգամ կարելի էր ասել իմ ուժերով կազմեցի ռոսպիսանիե /հայերեն չգիտեմ ինչպես է կոչվում/, որովհետև մեր միջին հրամկազմը շատ վատ է ճատրաստված: Նշանակել են ինձ քաղղեկի Օգնական: Միտքսյանն ինձ անվանում է ,պոլիտրուկի ճուտ: Ամսույս 21-ին պատահական գնդակով խփվեց շտաբի խոհարար Վասիլին: Թաղումը կատարվեց նույն 0րը: Դավադիրը տարվեց բրիգադայի շտաբը: Այսօր հրամայել են պարապմունքն անց կացնել ապրելավայրին մոտ: Խոսք կա որ շարժվում ենք: Շատերն ասում են գնում ենք Տուսիսե, այնտեղից կուբան: Բայց պարզ չէ: Գործը ցույց կտա:

Մամայկա:

29-ին. Ամսույս 25-ին Մամայկայից շարժվեցինք Սոչի: Հենց նոր էինք տեղավորվել գնացքում, երբ հանկարծ Օդային տազնապ տրվեց: Բոլորը փախան ապաստարաններ: Ես մի քանի հոգու հետ մնացի գնացքում: Մինչև տղաների վերադառնալը ես ինձ կորցրել էի, սաստիկ դողացնում էի: Այդպիսի տենդ առաջին անգամն էր որ պատահեց: Այնուհետև չգրեցի թե գնացքը երբ շարժվեց և երբ կանգ առավ Տուսիսեյից 2 կմ. հեռավորության վրա սիմոֆորի փակ լինելու պատճառով: Ես անիծեցի ու ատեցի իմ ողորմելի վիճակը, որի պատճառն այդ նենգ տենդն էր: Տուսիսեն նորից իր յուրահատուկ սովորութամբ դիմավորեց մեզ, այսինքն անձրև ու քամի: Դրա համար էլ այդ քաղաքն ինձ համար դարձավ նողկանքի առարկա: Մի կերպ տեղավորվելով փլատակված շենքի նկուղում սկսվեցայի տակ, մարտի 25-ն անց կացրինք: 27-ին նորից տենդս ցանկացավ գլուխ բարձ.

րացնել, բայց չհաջողվեց՝ խեղդվեց իր բնույթը: Այժմ գտնվում ենք ավելի վա-
յելու է տեղ՝ կիսավեր շենքի 2-րդ հարկում: հարմարութուններն հիանալի են
/մեզ վայել/: Երեկ բաղնիքում վերջ տվի ավազակ միջատներին՝ շատ գոհ եմ:
Նորից չգիտենք թե ուր ենք գնում և ահա կանգնել ու սպասում ենք հրամանի:

Շատերն ամուսն են իբր գնում ենք 18-րդ բանակը՝ դեպի Կրասնոդար, շատե-
րը Նովոռոսիյսկ, իսկ ոմանք էլ թե գնում ենք իրան: Կհամբերենք կտեսնենք:
Բաղ. Տուսիս

Ա Պ Ր Ի Ն

10-ին. Ամսույս 2-ին ժամը մոտ 14-ին թողեցինք մեր հետևում Տուսիս քաղաքը:
Բոլորիս համար մի զարմանալի երևույթ էր բացվել, թե ինչու մեր շարժվելու
ժամանակ եղանակն այդպես բարենպաստ է, քանի որ միշտ կարճես մի թագնված
ոգի ցանկանալիս է եղել մեզ տանջել: Բայց այդ զարմանքը միայն մինչև մուսթն
ընկնելը տևեց: Մենք շարժվում էինք նորից Ձուբգայի ուղղությամբ: Անցնելով
մոտ 27-ից 28 կմ. կանգ առանք ու տեղավորվեցինք ճանապարհի տակ պատրաստված
մի մեծ սրահի տակ: Գիշերն սկսեց բարակ անձրև մաղել, վերջ տալով մեր զար-
մանքին: Առավոտյան /13/ կոնցենտրատով կազդուրվելուց հետո ու փաթաթվելով
վրան թիկնճցում շարժվեցինք առաջ: Մենք անցանք Նեբուս գյուղն ու էլի առաջ
շարժվեցինք մինչև Նովո-Միխայլովկա: Այնտեղ իսկույն ևեթ վրաններ պատրաստե-
ցինք: Գիշերը նորից անձրևը մաղում էր, բայց հաջող անցավ: Առավոտյան նո-
րից շարունակեցինք ճանապարհը և մինչև մուսթն ընկնելը հասանք մեր հին ժա-
նոթ Ձուբգային: Մեր պատրաստած չարդախները բոլորը քանդվել էին: Զգիտեինք
որտեղ տեղավորվել: Անձրևն ամբողջ օրն եկել ու նորից գալիս էր, դարձել
էինք իսկը թրջված մուկ: Վերջապես կամաց-կամաց վաշտը տեղավորվեց /Առաջին
դասակը տեղավորվել էր դարբնոցում, ես և ստարշինան գտանք ավելի հարմար
տեղ, որտեղ լավ չորացանք ու մուշ-մուշ քնեցինք մինչև լուսաբաց: Առավոտ-
յան ընկանք Նովոռոսիյսկ տանող ճանապարհը: Այդ օրը պետք է կտրեինք ընդա-
մենը 25 կմ. ճանապարհ: 10 կմ. անցնելուց հետո հաջողվեց ինձ նստել ավտո-
մեքենա և հասնել մինչև Արխիպո-Օսիպովսկայա բավախանին մեծ ավանը: Զկարողա-
նալով ոչ մի ազատ տուն գտնել սպասեցի մինչև վաշտը տեղ հասավ, ապա տեղա-
վորվեցինք մի քանդված մեծ շենքում: Գիշերը կրակները հանգցնելով պառկե-
ցինք հանգստանալու: Ստանան տանի այս թիկնոցներին, համարյա թե չեն պաշտ-
պանում անձրևից: Ամեն անգամ ստիպված ես լինում չորանալ և ապա պառկել
որտեղ հնարավոր է ու քնել: 6-ին կտրեցինք ընդամենը 20 կմ. ճանապարհ:
Անցանք Պշադսկիյ պերեվալը /2 կմ. վերելք 2 կմ. վայրէջք/ և հասանք Պշադա
գյուղը: Այս անգամ տեղավորվեցինք շատ հարմար տեղ: իսկույն չորացրինք
մեր շորերը ու գուլպաները, լավ կազդուրվեցինք և տաք սենյակում մոռանալով
ամեն մի դժվարութուն հանգիստ ննջեցինք մինչև 7.4.43 թ. լուսաբացը:

Գիշերն անձրևից հետո ձյուն էր եկել, իսկ ցերեկը նորից սկսվեց անձրևը: Անցանք Տեկոս փոքրիկ գյուղակը. անցանք Միխայլովսկի պերեվալը 13 կմ. վերելք և խիստ վայրէջք՝ և այլ անհիշատակելի գյուղակներ:

Մեր կանգառը նշված էր 27 կմ-ի վրա գտնվող Ստալինի անվան սոցխոզը: Բայց քանի որ հնարավորութուն չկար այնտեղ տեղավորվել սկսեցինք նորից շարունակել ճանապարհը: Այդտեղից մինչև Գելենջիկ մնացել էր ընդամենը 13 կմ: 5 կմ. անցնելուց հետո անտառը միանգամից համարյա վերածվեց թփուտի, որն այդպես շարունակվում է մինչև Նովորոսիյսկ: Չհասած Գելենջիկ 5 կմ.-ի վրա թեքվեցինք դեպի ձախ և անցնելով մի քանի կիլոմետր ևս կանգ առանք ու թփուտներին մեջ զարկելով վրանները, քողարկված կրակ վառեցինք, չորացանք ու ընթրիք պատրաստեցինք: Այժմ գտնվում ենք նույն տեղում, այսինքն ֆալշիվիյ Գելենջիկ գյուղի մոտ: Առայժմ լավ ենք: Այստեղից մինչև Նովորոսիյսկ մոտ 40 կմ. է: Այսպիսով Տուսիսեյից մինչև Գելենջիկ անցանք 162 կմ. ճանապարհ: Վաշտի հրամանատարութունը ելնելով և իմ և իրենց շահերից ինձ նշանակեցին քաղղելի Օգնական և միևնույն ժամանակ մեռավ եմ որպես գրագիր: Ջոկս հանձնեցի սերժանտ իոզայտեսին: Ամիսը 200 ռ. փոխարեն ստանում եմ 150 ռ. Բայց թքած այդ չնչին տարբերության վրա: Խնդիրն այն է, որ նորից միշտ ,, հորս,, ստարշինայի հետ եմ:

ֆալշիվիյ Գելենջիկ:

Մեր բրիգադան հանձնված է 18-րդ բանակին, որի հրամանատարը Սովետական Միության հերոս Գեներալ Լեյտենանտ Լեսելիձեն է: Առում են թե իբրև մենք դեսանտային նկատառումների համար ենք պատրաստվում, որին բոլորովին ես չեմ պատկերացնում ու հավատում: Բայց և այնպես համբերութունը կյանք է: Շուտով շատ շուտով այդ էլ կտեսնենք: Ամեն Օր գերմանական ինքնաթիռներ են գալիս: Ճակատն այստեղից մոտ 30 կմ-ի վրա է: Հաճախ ենք լսում ,,արտիլերիյսկայա կանանդան,,:

17-ին. Գտնվում ենք նույն տեղում: Ամեն առավոտ վաշտի համար կարդում եմ թերթեր, այնուհետև նրանք գնում են պարապունքի, իսկ ես անցնում եմ իմ գրագրական գործերին: 15-ին Լեյտենանտ Այդինյանի փոխարեն եկավ ականանետային վաշտի հրամանատարներից Լեյտենանտ Մարչենկոն, իսկ նա գնաց 18-րդ բանակի տրամադրության տակ: Այսպիսով միջին հրամկազմից 5 հոգի ռուսներ են, իսկ մեկը Բաղդասարյանը: Իմ հարաբերութուններն այդ կազմի հետ տանելի են: Բայց ստարշինայի հետ սկսել են վատ վերաբերմունք, որը հասավ այն աստիճանի, որ վաշտի հրամանատարը սպառնալու ձևով ասաց, որ պաշտոնաթող կանեմ: Մեր վաշտից 3 միջնակարգ ավարտների տանում են միջ. հրամկազմի դպրոց | 18-րդ բանակին կից |: Այժմ մնացել եմ տատանման մեջ չգիտեմ գնալ թե ոչ: Երեկ Գրեցենկոյին հայտնեցի մտադրութունս: Նա գնալու խորհուրդ չտվեց, և ավելացրեց, ,, որ քեզ կարող ենք այստեղ կռուում շնորհեմ,, : Բայց և այնպես եթե հաջողվի կգնամ:

Այս կազմն ինձ դուր էի գալիս:

ՖԱԼՇԻՎԻՅ ԳԵԼԵՆՋԻԿ

18-ին. Այս գիշեր առաջին դասակը գնաց պաշտպանական գիծը, որը գտնվում էր ծովափի մոտ: Յերեկը 2-րդ և 3-րդ դասակներն էլ գնացին, բայց նրանք հավանական է, որ վերադառնան: Լուր է եկել, որ առաջին գումարտակի 2-րդ վաշտը նավով տեղափոխելու ժամանակ թշնամու ավիացիան խորտակել է: Առում են իբրև 2-րդ գումարտակը ևս գտնվում է ընդհարման մեջ: Այս ուղղութամբ նկատվում է, որ թշնամին սկսել է նեղել: Սմբողջ գիշեր հրանոթների որոտը դղրդացնում է անտառը: Երեկ շատ հետաքրքիր Օդային մարտ տեղի ունեցավ, որի ընթացքում ցած գցվեց հակառակորդի երկու ինքնաթիռ: Ամեն ժամ թշնամու ինքնաթիռները թռչում են մեզ մոտ:

ԿԵՂԾ ԳԵԼԵՆՋԻԿ

25-ին. Առաջին դասակը ամսույս 20-ին նորից ետ վերադարձավ: Այս քանի Օրը կատարվել են ճակատագրական նշանակութուն ունեցող նորութուններ: Ամսի 21-ի գիշերը տագնապի ձևով վաշտը շարեւով, վաշտի հրամանատարը հաղորդեց, որ այսուհետև ստարշինան պետք է լինի ավագ սերժանտ ֆադեբվը և միևնույն ժամանակ առաջին դամբլի կոմ. պոմ. վզվոդ Համբարձումյանին էլ հանեցին իր պաշտոնից /բայց փաստորեն նա նորից նույն պաշտոնին է/: Կարելի է ասել, որ վաշտի հրամանատարութունը տոգորված է նացիոնալիստական-շովունիստական ոգով, որը վատ հետևանքներ է ունենում: Այդ մասին արդեն հայտնված է հատուկ բաժին և շուտով ամեն ինչ կպարզվի: Ստարշինան արդեն 4-րդ Օրն է հետաձգում է հանձնումը, բայց վաղն արդեն կհանձնի: Նա որոշել է մինչև գումարտակի շտաբից հրաման չլինի չի ստորագրելու ակտը: Տղաներն անհամբեր սպասում են հատուկ բաժնի կարգադրութայնը: , Այստեղ պետք է մեկ տղա ծնվի, բայց տեսնեմք մեր մորից թե նրանց, : Այս ազգային հարցը ես շատ մակերեսորեն վերցրի, բայց պետք է ասել, որ շատերս ենք շատ Օրեր տանջվել հոգեպես դրա համար: Մեր ինքնասիրութունը վիրավորված է պետք է բուժվի: Մեր պատիվը ոտնահարված է, պետք է բարձրանա: Մեր սիրտը խոցված է՝ բալասան է պետք: Այդ բալասանը մենք ենք: Մենք պետք է մեր ուժերով այդ հսկա էլեմենտներին ցույց տանք, թե ով ենք ճենք:

Ահա մոտ 10 Օր կլինի, որ երեք Օրվա մթերք ենք ստացել ու պատրաստ վիճակում պահում ենք: Հավանական է, որ մայիսի 1-ը դիմավորենք անտառում Ես 150-ի փոխարեն ստանում եմ 300 ուղբեր: Վաշտի հրամանատարը ավագ լեյտենանտի կոչում է ստացել:

Մ Ա Յ Ի Ս

6-ին. Գտնվում ենք ճակատից 2 կմ. հետ: Սպրիլի 30-ին ստարշինան գնաց նոր կազմակերպվող 3-րդ գումարտակը /2-ին, 2-րդ և 3-րդ գումարտակները գնացել էին ճակատ Մալայա Ջեմլյա և Ղուրս էին, եկել մեր բրիգադայից նրանց փոխարեն նորերն էին կազմակերպվում/ : 29.4.43թ. ես սկսել էի աշխատել տնտեսական դասակում մինչև 4.5.43 թ. շատ լավ ապրեցի, սպասում էի հրամանի իմ տեղափոխման առթիվ: Բայց սպասածս չստացվեց: 4-ին հանկարծակի հրամանով ստացանք երեք Օրվա մթերք ու նստելով մեքենաներ շարժվեցին: Ես մնացի մեր սայլի հետ: Մուժ էր արդեն երբ անցանք Գելենջիկը: Այնտեղից ես արդեն խորասուզվել էի քնի մեջ: Ձիապան Անդրոպովը վեր կացրեց ինձ այն ժամանակ, երբ արդեն անցել էինք Կաբարդինկա գյուղն ու դեմ առել մի ահռելի նարի, այսպես կոչվող Կաբարդինսկիյ պերեվալ-ին: Վերելքն անցա ոտքով, այնուհետև իջնելով զառիվայրերով, թեքվեցինք Շապշուգսկ տանող ճանապարհից դեպի ձախ՝ դեպի Ախունկա: Գյուղում մեզ էր սպասում առաջին դասակը: Տեղ հասնելով գեղացիները դրեցինք սայլի վրա և շարունակեցինք ճանապարհը անցնելով 4-ից 5 կմ. հասանք վաշտին:

Մին դիվիզիան այստեղ մեզ քաջակի բերեց: Մեզնից քիչ առաջ դիրք էին բռնել ու սկսել էին կրակել թշնամու վրա: Իսկ նրանք երկար լռելուց հետո հանկարծ սկսեցին իրենց հրետանու կրակը բացել մեզ վրա: Ականանետայիններից երեք հոգու սպանեց և մի քանիսին վիրավորեց: Մեր մի քանի տղաներին թեթև կոտորակներ էին դիպել: Գիշերը քնեցի սայլի վրա և ահա այժմ սպասում ենք: Մեր հրետանին անընդհատ կրակում է նրանց վրա առանց արձագանք ստանալու: Շուտով նռնակներ ու՛ք հրացան կստանամ:

Հ ՈՔ Ն Ի Ս

6-ին. Ահա ուղիղ 27 Օր է, որ պառկած եմ Օլգինկայի գոսպիտալում ձախ ոտքից վիրավոր: Մինչև այժմ պարզապես չեմ կարողացել լրացնել Օրագիրս: Այժմ որոշել եմ ինչ գնով էլ լինի գրաշարել անցած դեպքերը:

Մայիսի 6-ին սկսեցինք մոտենալ առաջնային գծին և տեղավորվեցինք մի ձորակում: Քիչ հետո 3-րդ դասակը հրաման ստացավ գնալ առաջնային գիծ և այնտեղից մի քանի վաշտերի հետ անցնել հարձակման: Մեր նպատակն էր դուրս գրել ԴՈՏ-երից և ԴՁՈՏ-ներից գերմանացիներին, որոնք կառուցված էին Դոլգայա սարի գագաթին: Զանցած մեկ ժամ հրամայվեց, որպեսզի առաջին դասակը ևս շարժվի առաջ: Ես էլ որոշեցի գնալ նրանց հետ: Սարսափելի մուժ էր: Մեզ տրվեց մեկ կապավոր, որպեսզի հեռախոսական լարի Օգնությամբ դասակին ուղեկցի անտառի մեջ նեղ արահետով: Վաշտի հրամանատար տխմար

Վաշչենկոն գնում էր կապավորի ետևից, ես հետևում էի նրանց: Այնուհետև միաշար մեր ետևից գալիս էր դասակը, ամենավերջում Բաղդասարյանը: Հենց որ հասանք կրակային գոտուն, որտեղ զգացվում էր կյանքի թանկութունը. կապավորը հրաժարվեց առաջ շարժվել: Մորթապատ Վաշչենկոն հրամայեց ինձ բռնել լարից և ուղեկցել դասակը, իսկ ինքը սրտատրոփ իրեն գցեց այն խուռ ձորակը: Մի կերպ տեղ հասանք և պառկելով շղթա կազմեցինք: Հրամանատարները առաջ անցան հարձակման համար տվյալներ կազմեցին: Կողքիս պառկած էր սերժանտ Իոզայտեսը, որն իրեն հավկուրի տեղ էր դրել: Իսկ մյուս կողքից պառկած էր Բարանովը: Մեկ էլ այն տեսնեմ, որ վերևում սկսվեց կատաղի փոխհրաձգություն նայում եմ կողքերիս ձայն տալիս սատանան տանի, ոչ մեկը չկա միայն երեքս ենք մնացել: Պառկած սպասում եմ թե երբ Բարանովը կբարեհաճի հրամայել առաջ շարժվելու: Սակայն ապուշը մտադրություն էլ չուներ: Իոզայտեսի ձեռքին կար մեկ տուփ գնդացրի փամփուշտ: Առջարկեցի նրան, որպեսզի փամփուշտները տեղ հասցնենք: Բարձրացանք մինչև հակառակորդի կողմից պատրաստված լարացանցերին, որտեղ ավտոմատ չիկներն էին գրոհում, իսկ մերոնք չկան: Որոշեցի դրանց հետ մի քիչ մասնակցել մինչև որ լսվի գնդացրի ձայնը այնուհետև կկողմնորոշվեմ: ,,Կույրս,, որը պառկած էր ինձնից մի քանի քայլ հետ արդեն մի քանի անգամ ասել է՝ ,,Կալանտարյան յա իդու վ վորոնկու,, իսկ ես պատասխանում էի սառը տոնով ,,Նու կակայա քազնիցա իլի տուտ լեժատ իլի վ-վարոնկե,,: Բայց իհարկե տարբերությունը շատ էր: Մոտ 20 րոպեյից հետո վորոշեցի նորից գնալ մերոնց որոնելու: Չայն եմ տալիս ,,պոչիս,, իսկ նա անհայտացել է: Գրողը տանի արյունը գլուխս տվեց փախել էր այդ որկրամուկ վախկոտը: Սողալով գնացի դեպի աջ թևը, ոչ ոքի չհանդիպեցի: Այնուհետև անցա դեպի ձախ: Ռակետներ էին որ թռչում էին, գնդակներ էին լուսատու և ռազրիվնոյ, որոնք կոտրվող ծառի ճարճատյուն էին բարձրացրել: Չախ թևում արկից առաջացած մի խոր փոսում նկատեցի հանդիսաժոր գնդացիրը: Սողալով ընկա մեջը և ինչ տեսնեմ 3-րդ դասակի կոմ. պոմ. վզվող սերժանտ Կոլեկիշվիլին է 2-ին համար մյուսը կրտսեր սերժանտ Զիբրովը 2-րդ համար: Ընդամենը մնացել էր 30 փամփուշտ: Որոշեցի հենց այդտեղ էլ մնալ:

Օլգինկա

3-ին. Գտնվում եմ Սոչու հիվանդանոցներից մեկում: Թե ինչպես եմ զգում ինձ այդ հետո: Շարունակ ենք կիսատ թողած նյութն ու հաջորդականությամբ գանք: Առանց թշնամու կրակին ճաշեքու պատասխանելու գիշերը մի կերպ լուսացրինք: Լուսադեմին տղաները մի քանի արկղ փամփուշտ բերեցին, բայց մեր չար բախտից փամփուշտները լցրած էին ձեռքի գնդացրի շղթաների մեջ, որը հաստոցավոր գնդացրին պիտանի չէր: Սկսեցինք մի շղթան դատարկել մյուսը լցնել: Երբ ամեն ինչ պատրաստ էր, տղաներին հետ ուղարկեցի: Նորից մնացինք երեքով թշնամու քթի տակ: Մեր կարծիքով թշնամին գտնվում էր ուղիղ

մեր դիմաց 30 մ. հեռու և աջ կողմում նույն հեռավորութեան վրա, իսկ ձախ կողմի խրամատները կարծում էինք թե մերն է, դրա համար այնպէս կողմի վրա բոլորովին ուշադրութեան չէինք դարձնում: Փոքր անց մեզ մոտ եկավ հակատակային վաշտի փոխ վաշտապետը ավագ լեյտենանտ՝ նախկին ծովային— իր զենքի հետ միասին: Հանկարծ նկատեցինք, որ գնդակները երեք կողմից են մեզ վրա ճարճատելով տեղում, իսկ ձախ կողմից ավելի ևս ուժեղ: Մենք ինչ պարզ էր այժմ: Ավագ լեյտենանտն իր զենքն ուղղեց ձախ և լսվեց խլացուցիչ կրակի ձայնը: Մենք կարծեցինք, թե նրա կտորներն էլ չի ճեղքվի, բայց ի զարմանս տեսնեք մեկ էլ մյուս ծայրից է կրակում: Մի քանի անգամ կրակեց բայց մի անօգուտ: Պարզ տեսնում էինք թե ինչպես էր խրամատի մեջ վազվզում փոխելով կրակային դիրքը: Նրա կրակոցների շեշտակիութեանից զգացինք, որ գործունենք մի վարպետ սնայպերի հետ: Սկսեցինք զգուշանալ, բայց նրա ներկայութեանը ձախ կողմում մեզ խելքահան էր անում: Հրացանս վերցրի ու սկսեցի ճի հետևել նրան: Կրակում էի այնտեղ, որտեղից քիչ առաջ ծուխ էր բարձրացել նրա կրակոցից: Մոտ տասը փամփուշտ այրելուց հետո, տեսա որ ոչինչ չի դուրս գալիս հետ քաշվեցի: Այդ ժամանակ կոլեկտիվի ջղայնանալով սնայպերի հմտութեան վրա, վերցրեց հրացանը և հայհոյելով սկսեց կրակել: Զգիտեմ քանի գնդակ էր կրակել, երբ հակառակ կողմից արձակված գնդակը խփվելով մի քարի ջարդեց ու քարի կտորներն ինչպես ասեղներ թափանցելով շորերը ցավ պատճառեց մեզ: Այդպիսի մի փոքրիկ կտոր դիպավ աջ ականջիս և սկսվեց մի խայտառակ արյունահոսութեան: Մինչև ավագ լեյտենանտը կկայեր գլուխս, լսվեց երկրորդ պայթյունը և մի խորը խուռոց: Սուսնց հետ նայելու ասացի, որ խփվեց կոլեկտիվին: Գնդակը կպել էր ուղիղ գլխի մեջ տեղին և դուրս եկել ծոծրակից քիչ վերև ցրելով հետևից ամբողջ գանգը: Մոտ մի ըոպպե այդպես խոխուսցրեց և յուրաքանչյուր խուռոցի ժամանակ գլխից դուրս էր ժայթքում արյունախառն ուղեղը և մեռավ:

24-ին. Զգացինք, որ այլևս գլուխ բարձրացնելու հնարավորութեան չկա, որովհետև երեք կողմից կատաղի կրակ էին թափում: Հետևակն արդեն նահանջել էր անտառ ու քողարկվել այնտեղ, իսկ մենք զրկված էինք նահանջի հնարավորութեանից: Բիչ հետո սկսվեց հակառակորդի ականանետային ու հրետանային կրակը: Սրկերն ու ականները մարդակերի ոռնոց արձակելով զարնվում էին գետնին ու սասանում հողն իրենց ձայնով ու ուժով: Բիչ անց լսվեց մի շատ մոտ պայթյուն ու երկու հիստերիկ ճիչ: Դրանցից մեկը ես էի, իսկ մյուսը Զիբրովը: Ես վիրավորվեցի ձախ ոտքիս ծնկից վերև, իսկ նա նույն ոտքի թաթից: Իսկույն դանակով ճղեցի շալվարս ու ներքնավարտիկս և ավագ լեյտենանտի Օգնութեամբ կայեցի վերքս: Սուսվտյան կլինեմ ժամը 8-ը: Որոշեցինք պառկել ու ձևանալ իբր սպանված ենք, որպեսզի կրակը հեռացնեն մեզանից, իսկ երբ որ մութն ընկնի սնայպերների քթի տակից կփախենք:

Բիչ անց կրակել սկսեցին մերոնք ևս, սակայն նորից տուժողը մենք էինք:

Արկեբը պայթում էին նորից մեզ մոտ, քանի որ գտնվում էինք թշնամու տերիտորիայում: Եվ այդպես երկու կողմից էլ հյուսիսարևմուտք էինք: Արկեբի ազդեցութան տակ այնքան էինք կծկվել ու գլուխներս կոխել հողը, որ ներվային էինք դարձել: Երբեմն իմ շնչառութունից վախեցած կծկվում էի կարծելով թե ական է գալիս: Շատ դժվար է այդպիսի վայրկյաններ ապրել, երբ ամեն մի արկ իրեն հետ մահ է բերում: Այդպիսի ժամանակ ընկածս թվում է շաբաթ, իսկ ժամը՝ տարի: Զրկվում էս անգամ մտածելու կարողութունից: Երբեմն կրակի ընկածս անգամ զարկում էի մտածել տան- ծնողներիս մասին, հետաքրքիր է ինչ են անում նրանք այս ընկածս տանը, երբ իրենց որդու կյանքը մազից է կախված և ահա գուցե մի քանի վայրկյանից հետո կտրվի: Արդյոք զգում եմ: Վառ արևի տակ ծարավը տանջում էր մեզ: Մանուկներք փչում էր վառուղի դուրեկան հողը՝ շորերից անգամ: Շատ հաճախ էինք ծխում ամեն անգամ երկու ծխախոտ մի անգամից էի ծխում: Լավ էր սպանվածի գրպանում լուցկի գտնվեց: Գնդացիքը վաղուց էր շարքից հանվել, բայց մենք որոշ չափով հասել էինք մեր նպատակին, կարծում էին արդեն մենք սպանված ենք, դրա համար միայն հարևանցիորեն մերթ ընդ մերթ կրակում էին մեզ վրա: Վերջապես վրա հասավ ցանկալի մութը: Հենց որ ավագ լեզտեանտը ծլկեց, անպիտանները նկատեցին ու սկսեցին կատաղի կրակ թափել և նրա և մեզ վրա: Զգացին արդեն, որ խաբվել են: Սկսեցին նուսակ նուսակի հետևից շարտել մեզ վրա, բայց լավ էր փոսը չէր ընկնում: Իսկույն պայման կապեցի Զիբրովի հետ՝ հենց որ շատ մոտիկ մի նուսակ պայթեց երկուսս միասին մի աղիոզորմ ճիչ արձակեցինք, որ մենք էլ մեր ձայնի ուժգնութունից ապշեցինք: Դա բավական էր, որպեսզի թողնեն նուսակներում: Մոտ 15 ընկածս հետո հավաքեցի բոլոր իրերս, վերցրի հրացանս և հանելով կոլեկտիվի զրպանից պարտ տոմսը, ցանկացա ծլկել, բայց ավաղ... անգամ տեղումս շրջվել չկարողացա: Զիբրովը խորհուրդ տվեց, որ ամեն ինչ թողնեմ ու գնամ, իսկ ինքն իմ հետևից բոլորը կբերի: Երբ ամեն ինչ պատրաստ էր, մի կերպ սողալով փոսից դուրս պրծա ու սկսեցի չորեքթաթ սլանալ ներքև | շատ հիանալի չորեքթաթ էի տալիս |: Ռակետի լուսի տակ սրիկաները իսկույն նկատեցին և վերին աստիճանի գազազած, որ այդ օրը երկու անգամ խաբեցինք, սկսեցին զարհուրելի կրակ թափել ինձ վրա: Սկզբում այնքան կորցրի ինձ, որ հենց որ մի փոքրիկ փոս տեսա, գլուխս կոխեցի մեջը, իսկ մարմինս դրսում ծառայում էր որպես մի անշարժ նշանակետ: Բիչ հետո զգալով անմտութունս, որոշեցի թքել ամեն ինչի վրա և որքան կարելի է շուտ ընկնել անտառ: Նորից սկսեցի չորեքթաթ արջի պես չանկռելով հողը սլանալ ներքև: Զանցած մի քանի մետր հանկարծ կաթվածահարի պես մեկվեցի տեղս, նկատելով ուղիղ թիս տակ, կիսով չափ խրված հողի մեջ մի զարհուրելի արկ: Գլխիս մազերը պիլոտկաս բարձրացրին: Աշխատելով որքան հնարավոր է չնայել այն կողմը, գող-գող շրջանցեցի ականն ու ավելի ուժեղ թափով առաջ խոյացա: Հասա անտառի եզրին: Գնդակներն այժմ մի քանի մետր

վերևից էին թռչում: Կարելի էր շունչ առնել և մի հաստ ծխախոտ ծխել, հանուն կյանքիս կիսով չափ ազատագրմանը: Քիչ հետո տեսնեմ մեկը սողալով մոտենում էր ինձ՝ Բարանովն էր: Իսկույն խնդրեցի որ մի մարդ տա, որպես սզի տեղ հասցնի: Շրա գնալուց հետո տեսնեմ եկավ Պիսյուկը: Դե ասում է վեր կաց գնանք, բայց ինչպես վեր կենամ, ծնկիս խղից ոտքս ծալված էր չէր բացվում: Մի փոքր չարչարվելուց հետո, տեսնելով որ ոչինչ դուրս չի գա, թողեց հեռացավ: Մնացի միայնակ կածանի վրա պառկած: Այնպիսի մոլթ էր, որ արահետը չէր նկատվում: Կողքերս շոշափելով, մի կերպ գտա հեռախոսալարը ու սկսեցի սողալ: Թե քանի անգամ մահից փրկվեցի չեմ կարող թվել: Այսպես էր պատահում, Օրինակ եթե այդ ընկալիս մի քայլ առաջ էիննեի, ապա մի քանի գնդակով կխոցվեի գլուխս, կամ եթե մի փոքր էլ ուշանայի շարժվել, նորից կխոցվեի: Բայց երևի ճակատագիրս այդ չէր, փրկվում էի ամենուրեք:

Մոտավորապես 200 մետր սողալուց հետո, որը կես ժամից ավելի տևեց, սարսափելի հոգնեցի, ծնկներս շարժվում էին: Չարահատյալ պառկեցի մի ոչ խոր փոսի մեջ ու քնեցի: Զգիտեմ գիշերը քանի գնդակ է սուլացել գլխավերևս ու քանի գնդակ է սուլացել գլխավերևս ու քանի ական պայթել մոտերքում, միայն լուսադեմին մի ուժեղ պայթյուն ու մի սուր ցավ ստիպեց ինձ վեր թռչել տեղից: Քիչ ներքև պայթած ականի բեկորներից մեկը խրվել էր հետույքս: Այ քեզ իսկական, , Պողոտ, , : Շալվարս նորից արյունով լցվեց: Առանց որևէ ուշադրություն դարձնելու սկսեցի նորից սողալ: Հագիվ թե մինչև երեկո կտրեի մեկ և կես կիլոմետր ճանապարհը մինչև սան չաստը: Լավ էր ճանապարհին հանդիպեց առաջին վաշտի ավագ Սուքիասյանը, տեսնելով որ տանջվում եմ, շալակեց ու հասցրեց մինչև շտաբ: Այդտեղից էլ հետախուզական դասակից փոքրամարմին թումանյանը տարավ մինչև սան մաս: Այդտեղ նստեցրին սայլակի վրա ու առաջացանք: Չանապարհին հաջողվեց մեր սայլակի վրայից վերցնել Օրագիրս: Դա շատ ուրախացրեց ինձ: Հասանք այսպես կուզվող սեղմոյ կիլոմետրը: Սարի գագաթից լավ դիտեցի Նովոռոսիյսկի ավերակներն ու նավահանգիստը: Այնտեղ |մեզ սան. բատում| վերքս ճղեցին բեկորները հանելու մտադրությամբ: Բայց հետագայում պարզվեց, որ չէին գտել:

Շույն 8-ի գիշերը նստեցրին բեռնատար ավտո և 9-ի լուսադեմին հասանք ոչ հին ժանոթ Գելենջիկին: Այնտեղ խուզեցին գլուխս և ընդունելով չոր բաղնիք |քանի որ լողացնողներ չկային, ուստի անգամ ձեռքերս լվանալ չկարողացա| շորերս հագա ու խառնվեցի մյուս վիրավորներին, որոնք անկանոն փովել էին գետնին: Վիրավորների 20 հոգուց ավելին մեր վաշտից % էին, իսկ մյուսները պարզ է մեր գումարտակից: Իմիջիայլոց մոռացա ասել, որ մեզ սան. բատում հանդիպեցի Զիբրովին, որն իր խոսքին համաձայն բերել էր իրերս: 10-ի առավոտյան, երբ գետնին պառկած սպասում էի ավտոյին հանկարծ լսեցի անունս, հետ նայեմ տեսնեմ Ուդումյանն է: Որտեղի՞ց ես վիրավոր-հարցրի ես: Շա ձեռքերով հասկացրեց, որ ոչինչ չի լսում և այլևս

չխոսեց: Տեղավորվելով մեքենայի կաբինայում ընթացանք առաջ: Էլ չեմ ուզում թուղթս սևացնել ծանոթ վայրերի գեղեցկութեան նկարագրութեամբ, որոնք ամեն ընդամենը փոփոխվում էին մեքենայի արագ ընթացքի ժամանակ:

Հասնելով Օլգինկա, թեքվեցինք դեպի աջ և անցնելով 6-ից 7 կմ. հասանք գոսպիտալի ագաջին բաժանմունքը:

30. 7. 43 թ.

Պառկած եմ Սոչու նույն հիվանդանոցում: Շարունակում եմ գրանցումս:

Օլգինկայում ես, Ուզումս ու Մովսես գյուղացի Այվազյան լևոնը պառկած էինք իրար կողքի: Օրերն անցնում էին համարյա թե ուրախ: Ամբողջ Օրը պատմութիւններ էինք պատմում: այնպես որ մի քանի Օրից հետո չգիտեինք այլևս ինչ պատմել: Ուզումս տրամադրութիւնը մի քիչ ընկած էր: Խեղճին մեղադրում էին, թե իբրև կեղծում է իրեն խլութիւնն ու համրութիւնը /համենայնդեպս մի փոքր իրավացի էին/:

Մայիսի 15-ին վերքս կարեցին, բայց Օգուտ չտվեց: Վերքից անընդհատ թարախ էր գալիս: Թեւերը կտրել էին միսն ու թուլացել: 20-ից սկսեց տաքութիւնս բարձրանալ և բուրդովին չէր իջնում, ամեն Օր 39-40 աստիճան: համարյա ոչինչ չէի ուտում: Ոտքիս սրուքի փափկամասում ուժեղ ցավ էի զգում, Քրն Օրեց Օր ավելացավ և զրկեց ինձ ման գալու հնարավորութիւններից: Սկսեցի արագ թափով նիհարել: Այտոսկրներս դուրս թռան ու դեմքս դեղին պղնձագույն ստացավ: Բժիշկը պնդում էր, որ մալարիա է և դեղնախտ հիվանդութիւն է: Դեղերը ոչ մի Օգուտ չէին տալիս:

Հունիսի 7-ին, վերջապես, երբ ոչ ոք առանց կարեկցանքի ու զարմանքի չէր նայում դեմքիս, բժիշկները հավաքվեցին ու սկսեցին քննել: Այդտեղ ես լսեցի, որ նրանցից մեկը գերմաներեն ասաց, որ դրութիւնը, վտանգավոր, է: Քիչ հետո տղաներին հրաժեշտ տալով նստեցի ավտոբուսն ու սլացանք Տուսիս: Հունիսի 10-ին դուրս եկա Տուսիսից և նույն երեկոյան արդեն պառկած էի Սոչու հիվանդանոցում: 11-ին և 13-ին նամակ գրեցի տան վրա և անհամբեր սպասում էի պատասխանի: 15-ին տարան խիրուրգ կիրիւ Արկաղի մոտ: Հենց որ ինձ տեսավ գոչեց ոյ-ոյ ինչքան դեղին ես, ոնց որ լիմոն հիմա քեզ կկտրենք ու չայ կխմենք և իրոք վերքս նայելուց հետո իսկույն գործի անցան: Քնացնելով հանել էին փափկամասից երկու Օսկոլկա և շորի կտորներ ու մի քանի աման թարախ: Նույն Օրը տաքութիւնս իջավ և սկսեցի քիչ-քիչ ուտել մի քանի Զրից հետո համարյա շատ լավ էի զգում ինձ: Մնում էր միայն ոտքս ուղղվի /ծնկից չէր ուղղված/:

Հուլիսի 10-ին ստացա մամայի ու Արիփիկի ուղարկած բացիկները և շատ ուրախացա, որ Մելիքից նամակ են ստացել: Շտապ-շտապ Մելիքի վրա նամակ գրեցի ու գնացի Օպերացիոն սենյակ: Այնտեղ քնացրել էին, ուղղել ոտքս ու դրել գիպսի մեջ:

Աչքերս բաց արեցի անկողնուս մեջ ու սկսեցի գոռալ ուղիղ երկու սուտ-
կա: Զայնալարերս թուլացել էին, այժմ խոսելու փոխարեն խոխուում էի, ճիշտ
այնպես, երբ փոքր ժամանակ մայրիկս մի թեթև դիպչում էր, ես սկսում էի
գոռալ այնքան ժամանակ մինչև ինքն իր արածից փոշմանում էր ու սկսում էր
սիրաշահել կամ քաղցր խոսքերով կամ փողով | հա, հա, հա |: Բայց այստեղից
մայրիկս շատ էր հեռու և միևնույն է եթե մոտ էլ լիներ հազիվ թե լռեցներ:

Մասի 25-ին գիպսը հանեցին և քանի որ ոտքս դեռ մի քիչ ծուռ էր, խի-
րուրդն ասաց, որ հարկավոր է նորից գիպս դնել: Սուայժմ դեռ ոչինչ չեն
արել: Սպասում եմ:

Ժամանակս անց եմ կացնում կամ գիրք կարդալով կամ գնում եմ հայ տղա-
ների մոտ հեքիաթ ու պատմություն լսելու:

ՍՈՉԻ

Նամակիս հետ ջերմ ողջուն ծնողներիս, եղբորս և քույրերիս:

Օգտվելով այն առիթից, որ ընկերոջս եղբայրը Նրևանից եկել է այստեղ տեսութայն, ես շտապում եմ նամակ գրել և Օրագիրս ուղարկել Ձեզ, քանի որ այլևս գրելու տեղ չկա:

Ծնողներ ջան չգիտեմ ինչ բառերով արտահայտեմ իմ սերնդ ու համակրանքը դեպի ձեզ: Միայն գիտցեք այսօր, որ ես ապրում եմ ձեզանով ու ձեզ համար: Ստանալով այս Օրագիրս դուք այստեղ կտեսնեք ձեր որդու պատկերավոր գործունեությունը տարբեր վայրերում, որն անգամ ամենադժվար պայմաններում ու մահվան սարսափի տակ, նորից հիշել ու մտքով սլացել է դեպի ձեզ, դեպի իր անգնահատելի էակները:

Այս սև տառերի արանքում եմ պարփակում իմ անբիծ սիրտն ու պայծառ հոգին, որոնք ձեզ ողջութուն, երկար կյանք ու երջանկություն են ցանկանում:

Ծնողներ ջան անկասկած շատ անքուն գիշերներ անցկացրած կ'լինեք մեր պատճառով, բայց ինքներդ ինձնից քաջ գիտեք, որ համբերությունը կյանք է: Շատն անցել քիչն է մնացել: Շուտով այդ դարչնագույն ամպն, որն ինչպես բոլորի, այնպես էլ մեր տան շուրջն է մշուշվել, ցիր ու ցան կ'լինի կարմիր կայծակի հզոր ուժի տակ և կ'լսվի մի ուրախ որոտ, որտեղ կճանաչեք իմ և Մեկիքի ձայնը, որոնք գոչում են՝ , , Գալիս ենք մայրիկ, ընդունեցեք ձեր գիրկը, ձեր որդիներին, , : Եվ այն ժամանակ կ'մոռացվի ամեն մի տանջանք ու զրկանք:

Եթե կցանկանաք իմ առողջության մասին իմանալ՝ կասեմ որ գիպսս արդեն հանել են, բայց ոտքս դեռ աննշան ծուռ է, դրա համար կամ նորից գիպս կ'դնեն, կամ ֆիզիկուլտուրայի միջոցով կուղղեն:

Բարևում եմ բառիս ամենալայն իմաստով բոլորիդ:

Գրեցեք տեսեմ հայրիկն ինչով է զբաղված:

Զեր Բաբկեն

Բ. Սուչի 1.8.43 թ.

ՎԵՐՁ ՕՐԱԳՐԻՍ